— Տեսնում ես,—գոչեց զմայլագին կարենը:

— Ի՞նչ բան, միթե գայլեր չերեցին, — սար-
սափով պատասխանեց Գեղամը և խուզարկու աչքերով
վորոնումներ կատարել սկսավ:

— Վհչ, վհչ սիրելիս...

Զյունի լուսասպիտակ տարածության վրա կարենը
մի մարդ տեսավ, ավելի ճիշտը մի հղորազոր մարդու
ստվերը կապույտ, կարծես ժպտուն, բայց խստադեմ
միենույն ժամանակ: Նրա հայցքը կամք եր: Այդ
այն մարդն եր, վոր բանաստեղծի տողածի պես —

«Անգամ ջրկերը թիրեակ

Տվել ե նրա ուղեղին

Մի թել...»

Ակնթարթի չափ կարծ տեսիլը. բայց յե-
ղակի և յերջանիկ անակնկալի պես լցրեց նրա հոգին:
Դարձյալ թափ ու աշխույժ ստացավ կարենը:

— Ավելի քան ծանր, ավելի քան վայրենաշունչ
քան քաղաքացիական կոփնսերը՝ չկան, Գեղամ սիրե-
լի, — ասաց կարենը: — Իսկ դասակարգային պայքարն
ու հեղափոխությունը միշտ ել արյունով են...

Հովի գալարուն մի ալիք խլեց նրա թէրնից խոսք
ըրացնող բառերն և առաջ մղեց...

Նայիրյան նոր որերը զընզալով առաջ գնացին
այլևս, այնքան նման Զանգուի ջրերին զընզան: Ամենքը
լծվեցին աշխատանքի և շինարարության վերելքին տես-
դաղին:

* *

Ընկղմել ե կարենն իր լեժանկայում նորեն, սթա-
ֆելով նկատում, վոր առաջացել ե որը: Հովի բուրալի
կոհակներ խզեցին անտառի անդորրը: Թավշային ըստ-
վերներ կան անտառում, յեղնիները ճոճվում են նայիր-
յան աղջիկների պես նազերով: Մի անանուն կաս-
կած անհանդիստ դարձրեց նույնիսկ սոճիներին:
Կարենի սիրտն ել կարոտ ու կոկիծներով լցվեց հան-
կարծ: Աչքերը փակեց կարենը:

...Այս այն ճամբան ե — ուսկից մեկնեց ինքը:
Այն ժամանակ բարդիները կանաչ եյին, հիմտ վոսկի
յին և խշում: Հրեն իրենց տան կտուրը, սանրուլը...
ինչքան, ամուլը են իր քայլերը: Ահա փոքրիկ ու ա-
շուն տարիքով մաման: — Սպասում ելիր, չե: — Ինչպես
չե, կարեն, ավելի վորդի ջան: — Հետո մյուսները, — Գե-
ղամը, Արտաշը, Լեիկը... Սպասիր, ծանր ու վարանոտ
մեկ ուրիշն ել ե գալիս: Դիշերվա պես ու մտղեր ունի
նա. Նրա գեմքը փղոսկրի յե նման, քանզակված ե
կարծես. մի փոքր տժգույն և սակայն: — Վորքան նման
ե նա մհծղի ու թարմ շուշանի. — «Շահանույշ»... Յերբ
կարենն արթնացավ, կեսոր եր արդեն, ճաշ աղջարա-
րող իրենց զանզակի խոշոր ձայնը ալեկոծում եր չորս
բոլորը: Հիմա բոլոր հիվանդները ճաշի յին շտապում, —
մտածեց: Վեր կացավ տեղիցը, ծալեց լեժանկան, գրավ
ուսին, իջավ և գնաց:

Սանատարիումի հսկա շենքը անմարդաբնակ եր կարծես լեժանկաները գատարկ նստել են բակում, ծառերի շուքիցին, վոմանք ել՝ գրասենյակի դռանը իրստ մոտիկ:

— Ուշացել եք, ընկեր, կանչում և կարենի յետեից գոնապան Միքայելը. իրավունք չունիք ընկեր...

Յերազրթաթախուդարձյալ գանդաղ ե գնում կարենը: — Ռուր: — Այնտեղ սեղանատուն, ուր իր հիվանդ ընկերներն են ճաշում: Սակայն ինչ ասաց Միքայելը: — «Իրավունք չունիք, ընկեր...» Ճիշտ ե, ուր իրավացի յես, սիրելիդ իմ Միքայել, քո ճայնը հարազատ ե ինձ համար — քիչ առաջ տեսածո յերազն փնչպես, յես ուշացել եմ. ուշ և արդեն: Բայց յես ել իրավունք ունիմ, սիրելիս, վորովհետեւ յես իմ անձնական յերջանկությունը յերազումս դոնի շոշափեցի. զուցե վերջին անգամ:

Կարենին թվաց միայն, վոր բարձր ճայնով պատասխանեց դոնապան Միքայելի:

Ճաշարանում կենդանություն եր տիրում, պատառաքաղներն ու գոգաճները զնդում եյին ափուներում և պառանվում կանչերին ուրախ: Խոհանոցի բաց գոնակներից քիմքը գրգռող կերակրի հոտեր եյին դալիս:

— Ուշացել ե, ուշացել ե մեր ընկերը, միասին կանչեցին ճաշող մի խումբ ընկերներ:

Ներկա և հերթապահ բժիշկը ընկերաբար նկատեց «անկարգությունը», և

— Յերբեմն անտեղի գուշը ել եք ուշանում, ասաց կանչողներից բազվեցի Արամայիսի:

— Յես, ընկեր բժիշկ, յես առաղջ եմ, յես կարեն եմ, պատասխանեց Արամայիսը:

— Կարծեմ մնացյալ մեկ թորդ ինամել և պետք, չե, ընկեր Արամայիս:

— Զվախենաք, ընկեր բժիշկ, չվախենաք, յես ձեզնից առաջ ես աշխարհից մեկնողը չեմ:

— Ինչպես...

— Այսպես, առաջ դուք, հետո յես...

Արամայիսի սուր ու տարորինակ պատասխանը ծիծաղի տարափ անձրկեց արգեն ուրախ սեղանատանը:

Կարենը տիսուր եր նորեն, վոչ փորձեց, վոչ ել կարողացավ սրտանց մասնակից գառնալ ընկերների ծիծաղին ու կատակախսոսություններին այս անգամ: Յերենինի լուսավոր սեղանատունը տրատում թվաց իրեն: Մաղիկներն ել խեղճ եյին, անուրախ — ծաղկամաններում, թօքախտավոր — իրեն պես: Միայն լեռնային գեղին շուշանները լիսան և անտառի բռնմունք արձակեցին:

Շուշաններ, թեկուզ լեռնային գեղին շուշաններ...

— Զե վոր նա նման եր լուսավայժառ ու մեծղի շուշանի. նա կարող եր վալ բուրումն ավետել իր նողին: Միթե լատինական անունների այդ լաբիրինտում չկարողացավ մի գեղ գտնել նա ցարդ, վոր բուժել կարողանար իր ցավը, կասեցնել վերջակետ դնել: Կարելի՞ յեմիշտ չափ ու ձեռվ ապրել սանձ դնել շարունակ տրամադրություններին, այն ել խիստ յերիտասարդ մարդու համար: Ե՞խ, սպառանան տանի: Ո՞վ գիտե, թերևս վաղուց, վաղուց և մուացել Շահանուշն իր կարենին, վաղուց ժամանակի կրակին հանձնել իր խոստամբը:

Վաղուց, վաղուց... Դեղին շուշաններն ել տիսուր

են ծաղկամաններում. իսկ այն ուրախ բիծը, ժպտուն
աշքի խիստ նման, վոր իր ճաշասեղանի անկյունից
նայում եր միշտ - չքացել ե նաև:

Մղջավանջի պես ծանր անցավ գիշերն ամբողջ
Մոտիկ անցյալի հուշերը, արդեն մոխիր ու փլատակ,
յերկար տանջեցին Կարենին: Դժվար եր քուն մտնել
ձախ կուրծքը ծակում եր դարձյալ, ծակում եր անվերջ,
մերթընդ մերթ ել հազում եր, հետո բարակ ու մածուցիկ
քրտինքն յեկավ ու պատեց մարմինը վողջ:

— Կանչեմ հերթապահ բժշկին, պատմեմ ամեն
բան, Բայց ինչու. ինչ կարող ե անել նա: Սովորական
և անոգուտ դեղեր, ապա միսիթարական մի քանի
խոսք — թեթևացնելու համար դրաւթյունս վորպիս թե:
— Վոչ, վոչ, չեմ ուզում, ինչ վոր կա — թող գա, նույնիսկ
ամենեն սոսկալին, — Մահը: Յես իրականությանը, այս
դեպքում մահվանը, նայում եմ շեշտակի: յես նրանից
չեմ վախենում: Յես բնավորության համառ ու հաս-
տատ գծեր ունեմ: յես աշխատել եմ զարգացնել այդ
գծերը. ինձ աջողվել ե այդ — շնորհիվ իմ բնավորու-
թյանն ու քաղաքական ըմբռնումներին: իսկ յեթե յեր-
բեմ ջղայնանում եմ, այդ ել պիտի վերագրել իմ
զգացածս Փիղիքական ցավերին, հաճախ ել հոգեկան
բարդ ապրումներիս: Զե՞ վոր յես մարդ եմ, միւնույն
ժամանակ յերիտասարդ և զգայուն:

Ապա մի տարորինակ ե անտառային դեպք ել հի-
շեց Կարենը:

Մի շաբաթ առաջվան դեպք միայն: — Յերկու կին
և մի տղամարդ եյին իր շուրջը. կիներից մին խար-
տյաշ եր, մյուսը — սեռուկիկ: Կարճ ու հաստլիկ արևելցի

մի տղամարդ ել ունեյին հետերնին: Ո՞ւհ, վորքան չար
եյին այդ կանայք, վորքան քաղքենի:

— Նազար, իջիր, իջիր և լեժանկան և ջուր
բեր խմելու, հրամայական տոնով ասաց խարտիշունին
արևելցուն:

Նազարն ստրկորեն մեկնեց, շուտով ջուրն ու
լեժանկան բերավ:

— Կենացդ, Նազար, ասաց խարտիշունին և մի
բաժակ սառը ջուր խմեց:

Շփոթ ու տարտամ նայում եր Նազարը իսկ և
իսկ կովի կերպարանքով:

— Ինչու յես նայում գառան բութ ու անմիտ
աչքերով, Նազար, գոռաց խարտիշունին, չասես «Չնոր-
հակալություն», մեծարելի տիկին»:

Նազարը փորձեց ժղոտավ բայց ակամայից իր
վոսկա բազմաթիվ ատամները ցուցադրեց: Սեռլիկն
ել վերջը իր հերթին մեջտեղ յեկավ:

— Նազար, ուշ ե, գնա քնելու, չե՞ս տեսնում
քունդ տանում ե:

Նազարը շփոթված չորս-դին նայեց, տեսավ արևն
ուղիղ գենիթին եր կանգնել, կես որ եր ուրեմն, չեյին
ձաշել նույնիսկ, մինչդեռ այս կինը քնելու յեր ուղար-
կում իրեն...

Սնգգալաբար թուլություն յեկավ Կարենի վրան.
Քունի ալիքներն հասան վերջապես և փակեցին նրա
աչքերը:

...Նեղ ու բարակ կածանով գնում ե նա: Վորտե-
ղից վորտեղ ժայռեր կանգնեցին առջեր, դժվար ե
բարձրանալ: Մի կերպ բարձրանում ե սակայն: Հեռուն՝
մի գյուղակ ե յերեսում պարտեզներով ծառազարդ. կա-
նաչ դաշտում հանգչում ե հոտը. խիստ մոտիկ՝ հովիմ
ե հոտի բրդոտ զամփոխ հետ: Հովիվը սրինդ ե ածամ

անուշ: Դեպի գյուղակն ե գնում հիմա յել: Ճանապարհի վրան մի մարդ բռւսավ հանկարծ: — «Միթե՞ դու յես, Հայէ: Զե՞ վոր տարիներ առաջ սպանվել ես դու», ասում ե մտովի: Հայկը տոնական մաքուր և սպիտակ շորեր ե հագել. չի խոսում: — Ո՞ւր մնաց վյուղակը: — Հիմա ծնվել ե, ծփուն ու կապտորակ, նավեր կան ծովի վրա: — Իրիկուն ե խաղաղ ու ծիրանոսկի: — Բայց... Վարտեղից և ինչքան արագ բարձրացան ամպերը. ծովն անհանգիստ դարձափ: Սատանայական մի ձեռք խովանք հոնեցբեց իրիկվան մեջ և ծովին խաղաղ: Հետո — փոթորիկ... Ճայերը ճշում են սուր ու աղողողոմ: Ծովը ծփում ե և աղի բռւյը արձակում անընդհատ: Դժվար ե շնչել. կարծես խնդրվում ես: Մի խոշոր նավ որորվում ե ջրերի և փոթորիկի ձեռներում երբ տաշեղ: Շուտով, շուտով կործանվի պիտի... Ե՞ր ո՞վ կա այդտեղ, ովհություն...»

Յերբ Կարենն աչքերը բացավ — արևով վորողուն գտավ իր սենյակը: Նախաճաշին հազիվ տաս ըովել յեր մնացել: Քույր Նվարդը յեկել եր նրա առավոտյան տաքությունը չափելու:

Ժամի 1-ին ցրիչն յեկավ, Կարենին թերթ, հանգես և յերեք նամակ բերավ: Կարոտի և քաջալերանքի խոսքերով լեցուն եյին նամակները: Իր ընկերները առողջություն եյին ցանկանում լիովին ե... սպասում: Իսկ Շահանուշից վհչ մեկ լուր:

— Լավ... ասաց ինքն-իրեն նա թախծաղին և շտապ բացավ թերթերի ծրաբները:

...Ինչպիսի ամպրոպ ե բարձրանալու աշխարհում: Չինաստանում, Արևելքի այդ լայնատարած հողամա-

սում, գեղքերը հաջորդում են իրար արագ: Յերբ ազգային հեղափոխական շարժումը մնոնի՝ կսկսի մյուսը, ցանկալի դասակարգային խոշոր ճակատամարտը՝ հանուն գալիք լավագույն որերի: Դարձյալ անվերջ հակասություններ յերապեկան ցամաքում... Շուտով անշուշտ կսկսի... մարդկության ստվար մեծամասնությունն իր արյան պես կարմիր ու վառ զրոյ կպարզե: Կափը կըորրոքվի, կանցնի հետպհետե յիրկը - յերկիր — հրդեհն ինչպես լափիկող՝ անսառե-անտառ... Մեր կամքը, իրը հսկայական հրասյուն, այս աշխարհից կկանգնի, կլուսավորե նրանց ճանապարհը... Մի-ացեք մինչեւ

Թոքեր պատող ուժգին հազը կտրեց իսկույն կինո-ժապավենը: Հետո տուք արյունը թոքերից հոսեց, նման բարձրացող դրոշակին և տեսիլին կմրմիր:

Սեպտեմբերն յեկավ, որերը ցրտեցին: Յերբեմն հովս եր անցնում սարսուռն և չարագուշակ: Կարենը վաղուց անտառ գնալու իրավունք չուներ: Բայց նրա բաց լուսամուտից յերեսում եր այս: Անտառում կանաչ գույնը նվազում եր հետպհետե: Սաղարթավոր ծառերը գեղնել եյին արդեն, — վոմանք վոսկի եյին հագել, ուրիշներ ծիրանի, մի քանիսն ել նարնջաթույր: Իր հիվանդ ընկերներից շատերը արտոնություն ստացան և մեկնեցին:

— Դու այստեղ պետք ե մնաս զես, հավանաբար և ամբողջ ձմեռը: Գարնան, յերբ լավ ու առույգ զգասքեղ — կդնաս, ասաց սանատորիումի գլխավոր բժիշկը:

Կարենին թվաց հանկարծ, վոր մի գեղեցիկ շենք բռնկվեց, շառաչելով ընկան սյուները: Ապա ցասում արտահայտող իր աչքերը բժշկին ուղղեց, խուլ մոլտաց

և ջղայնաբար աջ ձեռքը խփեց քովստի սեղանին։ Կաթի
լիք բաժակն ընկավ իսկուն, զրնգաց, վշուր - վշուր
թափից հատակին մաքուր...

Մի գիշեր յելեքտրական լույսը կտրվեց նորեն։
Ննջասենյակները թաղվեցին կիսախավարում։ Հերթա-
պահ բժշկի գրասենյակում միայն մոմի լույս կար ա-
ղոտ ու դողուն։ Լուսաբացը մո՛տ եր, արշալույսը սըր-
սփում եր դուրսը։ Բժիշկը թղթեր եր դասավորում
մտածկոտ, ապա վորոնում մի ծրար՝ անհրաժեշտ կար-
գագրության համար։ Ծրարը իրիկունն եր ստացվել։
Գտավ և կրկին անգամ կարդաց։ —

...Բժիշկ,

Կոկիծով տեղեկացանք մեր յերիտասարդ ընկե-
րո՞յ կարեն նարինյանի վաղաժամ մահվան մասին։

Նրա դին մայրավան վոխադրելու պիտք չկա։
Արդեն տարաբախտ ընկերոջ հարազատները տեղիք մեկ-
նեցին։ Քաղաքացիական թաղմանը ներկա կլինին նաև
տեղիդ մեր ընկերները։ Թաղեցիք նրան իրենց պար-
տականության ճամբին ընկած մեր ընկերների կողքին,
փոքրիկ պանթեռնում։

Անհրաժեշտ ե սակայն, իբր համեստ հուշարձան,
մի փոքրիկ և գեղեցիկ տապանաքար զետեղել նրա
շիբմին՝ հետեւյալ մակագրությամբ —

Մի ԶՈՀ ՅԵՎԾ

(Կարեն Նարինյան)

190.—192.

...Բարեներով

...Պատ. քարտուղար Արտ. Հանեսյան

ԿԵՆԴԱՆԻ ՅԵՎ ԿՐԱԿԵ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԵՏ

Յերթալով գիշերը տժգունում եր ավելի ու ավե-
լի, և սե, հին ու հոկայական բերդի նման փլչում հետ-
գինտե։ Սպառնական ու հաստատուն քայլերով մոտե-
նում եր լուսաբացը։

Զմեռ եր, ձյունապայծառ տարածություն և դե-
պի հեռուները տարածվող քաղաք։

Բանաստեղծ Վարդգեսն իր բնակարանն եր վե-
րադառնում այդ ուշ ժամին։ Նրա զլուխը աաք եր մի
քիչ և տրամադրությունը բարձր։ Կարելի յե նստել և
առանց յերկար ու բարակ մտածելու գրոշմել վերնա-
գիրը — «Զյունապայծառ Գիշեր», և գրել մի գողարիկ
բանաստեղծություն, յերաժշտական և «յեսի» զգացում-
ներով հարուստ մի քնարերգ, մտածեց նա։ Այս, մտա-
ծեց միայն, այն ել հենց այնպես, կարծիս մեքենա-
բար։ Սակայն ինչ հարկ, քրքրիր սեղանիդ մեջ դարս-
ված ձեռագրերի բազմությունը, դու այնտեղ «Զյու-
նապայծառ Գիշեր»-վան նմաններ շատ կդանես, նույն-
իսկ կընիանաս նրանց նրբությանն ու բյուրեղային
գեղեցկությունների վրա։ Բառերն այնտեղ նույրը ա-
սեղնագործությամբ են բանված, մեն մի թելիկը, յե-

րանգն իր տեղն ե, տալիս ե իր հատկանշական նըր-
բերանգը, իր իլլուզիան:

Հիմա ուրիշ բան ե ուզում նա. Կրան ձանձրա-
ցրել ե պայմանական չափը. քացախի հռո ե դալիս
հնից:

— Յես ուզում եմ արձակել թևերս, ազատու-
թյուն տալ շարժումներիս:

Յեվ գրել նոր բան, այսինքն պատկերել այն
կյանքը, ուր ապրում ե ինքը, նայել կինդանի մար-
դու աշքերին շեշտակի: Զե՞ վոր նա շրջում ե այստեղ
և այստեղ, ամենուր մեր կյանքում: Այն տրամվայը,
վորով նա վերադարձավ այս ուշ պահուն—նոր եր,
գեղեցիկ, ինչքան նման եր նա իր նմաններին—նույն-
քան ել տարբերվում եր նրանցից: Նրա ճակատին
արքայական նշան չեր փայլում. վոչ եր արքայավայել
ուզորներ եյին բազմել այնտեղ: Հետո նույն տրամ-
վայում, իր կողքին համարյա, նստել եյին յերեք զին-
վորականներ: Նրանց խոսակցության և շարժումների
մեջ առանձին կամ «արտասովոր» վոչինչ չնշմարեց
նա գոնե: Նրանց ուսերն՝ ազատ եյին փայլվուն ու-
ստադիններից, կուրծքն ու թևերը զուրկ վոսկեղեն կո-
ճակներից: Նրանք ժամուն եյին, պարզ ու հասարակ:
Յեթե ուշադրությամբ նայելու լինելիք նրանց, կը
նկատեյիր, վոր արևի ուժն ու հողի բույրը առանձին
կինդանություն են տալիս գյուղից յեկողների դիմա-
գծերին: Յերեսում եր վոր յերեկույթից եյին վերա-
դառնում նրանք, վորովհետեւ խոսում եյին տեղի ու-
նեցած բանախոսության, արտասանությունների և
այդ առթիվ իրենց ստացած առավորությունների

մասին: Յեթե չեր սխալվում, իր անունն ել տվին...
իբր հեղինակի:

Իսկ ընթրիքից առաջ մի ուրիշ տեղ եր նստել
վարդպեսը: Այդ տեղից հետո յեր, վոր Կարոյի և Ար-
շավիրի հետ գնաց մի փոքր շունչ քաշելու և մի բա-
նով հանգստացնելու բողոքող ստամոքսը:

Այդ «ուրիշ տեղն» ել հետաքրքիր եր խիստ.
Ընդարձակ ժողովասրահ և բազմաթիվ ժողովականներ,
—մարդիկ, վորոնք ցանկություն ունեյին հարթ տա-
րածության վրա ընթացող ջուրը պատն ի վեր բար-
ձրացնել նույնիսկ: Զարմանալի յե, մեր շուրջը մի
կյանք և կառուցվում, վոր իր տեսակն ու նմանը չու-
նի մեր մոլորակի վրան, վոչ ել ունեցել և յերբեք.
Ճկա այն որինակը, այն մադելը, վորից գու ընդորի-
նակել կարողանաս: Ուրեմն, վոչ միայն տեխնիքական
աշխատանք պիտի կատարես դու, այլև—սահեծագոր-
ծական, իմաստուն և նոր: Փոխվում են նույնիսկ իրի,
առարկայի ձեերը հաճախ, նորակառուց շենքերի վո-
ճը: Փոխվում ե մարդն ինքը—իր բնավորությամբ,
սովորություններով, հոգեբանությամբ, հավատալիք-
ներով, կենցաղով...

Անընդհատ աճում եր ժողովականների թիվն
այստեղ, իրարից հազիվ մի քանի բողեյով շուտ կամ
ուշ գալիս եյին նրանք շտապելով. գալիս և գրավում
գեռ գատարկ և սպասող աթոռները:

Ընկեր Ծովինցի գեմքը ուրախություն եր ար-
տահայտում ուզգակի: Նա գիտեր, վոր հետաքրքրու-
թյունն աճում, հայացքները բազմանում եյին: Շա-
րաթներ առաջ պատրաստած նրա ընդարձակ զեկու-

ըանգն իր տեղն ե, տալիս և իր հատկանշական նըրբերանգը, իր իլլուզիան:

Հիմա ուրիշ բան և ուզում նա. Կրան ձանձրացըել և պայմանական չափը. քացախի հռտ և դալիս հնից:

— Յես ուզում եմ արձակել թերո, ազատություն տալ շարժումներիս:

Յեվ գրել նոր բան, այսինքն պատկերել այն կյանքը, ուր ապրում է ինքը, նայել կենդանի մարդու աչքերին շեշտակի: Չե՞ վոր նա ըրջում և այստեղ և այստեղ, ամենուր մեր կյանքում: Այն տրամվայը, վորով նա վերադարձավ այս ուշ պահուն—նոր եր, գեղեցիկ. ինչքան նման եր նա իր նմաններին—նույնքան ել տարբերվում եր նրանցից: Նրա ճակատին արքայական նշան չեր փայլում, վոչ ե՛ռ արքայավայել ուղևորներ եյին բազմել այնտեղ: Հետո նույն արամվայում, իր կողքին համարյա, նստել եյին յերեք զինվորականներ: Նրանց խոսակցության և շարժումների մեջ առանձին կամ «արտասովոր» վոչինչ չնշմարեց նա գոնե: Նրանց ուսերն ազատ եյին փայլվուն ուստիդիներից, կուրծքն ու թերը զուրկ վոսկեղեն կոճակներից: Նրանք ժպտուն եյին, պարզ ու հասարակ: Յեթե ուշադրությամբ նայելու լինեցից նըանց, կը նկատեիր, վոր արեի ուժն ու հողի բույրը առանձին կենդանություն են տալիս գյուղից յեկողների դիմագծերին: Յերկում եր, վոր յերեկութից եյին վերադանում նըանք, վորովհետեւ խոսում եյին տեղի ունեցած բանախտության, արտասանությունների և այդ առթիվ իրենց ստացած ապավորությունների

մասին: Յեթե չեր սխալվում, իր անունն ել տվին... իրը հեղինակի:

Իսկ ընթրիքից առաջ մի ուրիշ տեղ եր նստել վարդգեսը: Այդ տեղից հետո յեր, վոր կարոյի և Արշավիրի հետ գնաց մի փոքր շունչ քաշելու և մի բանով հանգստացնելու բողոքող ստամոքսը:

Այդ «ուրիշ տեղն» ել հետաքրքիր եր խիստ, ընդարձակ ժողովասրահ և բազմաթիվ ժողովականներ, —մարդիկ, վորոնք ցանկություն ունեցին հարթ տարբացնել նույնիսկ: Զարմանալի յե. մեր շուրջը մի կյանք և կառուցվում: վոր իր տեսակն ու նմանը չունի մեր մալորակի վրան, վոչ ել ունեցել և յերենե, չկա այն որինակը, այն մադելը, վորից գու ընդորինակել կարողանաւ: Ուրեմն, վոչ միայն տեխնիքական աշխատանք պիտի կատարես դու, այլև—ստեղծագործական, իմաստուն և նոր: Փոխվում են նույնիսկ իրի, առարկայի ձեերը հաճախ, նորակառուց շենքերի վոճը: Փոխվում և մարդն ինքը—իր բնավորությամբ, սովորություններով: Հոգեբանությամբ, հավատալիքներով, կենցաղով...

Անընդհատ աճում եր ժողովականների թիվն այնտեղ իրարից հաղիվ մի քանի բոպեյով շուտ կամ ուշ գալիս եյին նըանք շտապելով, գալիս և զրավում դեռ դատարկ և սպասող աթոռները:

Ծնկեր Ծովինցի գեմքը ուրախություն եր արտահայտում ուղղակի: Նա գիտեր, վոր հետաքրքրությունն աճում, հայացքները բազմանում եյին: Շարաթներ առաջ պատկանած նըա ընդարձակ գեկու-

ցումը հիմա ալիքավորվում եր իր մտքում, ուղեղի ծալքերում. ուղում եր գուրս խուժել այդ ափերից նեղ և հոսել... Բայց և գլուխը նա, զոր այնքան ել հեշտ չե ազատվել ներկա յիղողների ձեռքից: Անմեղ գառների յերջանիկ հոտը չե սա, վորին մոռական գավազանի ոգնությամբ «յերկնքի գաշտերում» արածացնելու տանես: Յյուրաքանչյուրը նշանցից, մի քիչ ավելի կամ պակաս, զուցի և իրենից լավ, դիտե մեր այսորվա կյանքը և այդ կյանքի առաջադրած խնդիրները: Կոշտացած ձեռներով այն բանվորը, վորի ածուխի չափ սև աչքերն իր աչքերին են հառած հիմա, իր շրջապատի բարդ կյանքը դիտում և թերևս ավելի լավ, թափանցում յերեւոյթների խորքը մասնագիտութեն, թերևս...

— Ընկերներ,

... Ենթե մենք համեմատությամբ մոտենանք անցյալ տարիներում տարած մեր աշխատանքներին, կտեսնենք, վոր այդ մոտավոր անցյալում քաղիսորհութիւնի անդամների 25 տոկոսն և մասնակցել ընթացիկ աշխատանքներին, մինչդեռ 1926-1928 թվականներին—50-55 տոկոսը:

Ծովենցի դիմագծերը պայծառացան րոպե առ ըստի: Գաղնանային թարմ ողից հարբած և արեառ դաշտերն ընկած ձիյու նման ծառս եր յենում նա, թափահարում գլուխը, մերթ ել վեր քշում սկաթույր մազերը, վորոնց մեջ արծաթյա թելիկներ կային ծաղկուն:

... Դուք նկատել եք անշուշտ, վոր մեր տրամվայը առաջադիմել ե թե քանակով և թե վորակով, ջրմուղի խողովակի յերկարությունը աճել ե կըկնակի:

Ամենահետընկած թաղամասն իսկ հնարավորություն ունի ոգավելու այդ բարիքից...

Կես ժամ հետո՝ զեկուցողի ձայնն ավելի աշխուժ եր հնչում, բրոնզե զբնգոցներով, իսկ աջ ձեռքը բնորոշ ձեռք զծագրում ողի մեջ—կլոր և հատու:

Յերբ նա բավականին մանրամասն կանդ առավ մեր արդյունաբերական հիմնարկների աճի վրան, թվերով մի առ մի ցուցադրեց նրա զարգացումը—չբավականացավ նախկին ժամանակով. նրա վոգեռությունը վարակիչ խանդակառության փոխվեց այլեւ:

Ապա նա անցավ յելեքտրականության բաշխման, կուլտկրթական աշխատանքի ծավալմանը և աշխատավարձի ընդարձակման ու բարձրացման խնդիրներին:

Զեկուցող Ծովենցի ուշագրությունը վրիսեց հանկարծ, կենտրոնացավ հեռավոր մի կետի: Այստեղ իրեն ունկընդում եր նաև իր կինը, Փառանձեմ: Իսկ նրա կողքին՝ Վահանիկն եր նստել: Վահանիկն իր կրծքին կարմիր ժապավենի մի կտոր եր փակցրել այդ որը, մատով ցուցադրելիս զեկուցող հորն ու փաթթվում մամային:

Զեկուցումը վերջացավ:

Աննկատելուն մեկ ու կես ժամ եր սահելով անցել: Գուցե մի քիչ ել ավելի:

Ընդհատված լուսթյունը խզվեց մեկն: Ընդարձակ ժողովասրահը, իբր խոշոր մեղվանոց, սկսավ աղմկել մեղմ, և զարմանք և հրճվանք տրատայտել:

Նախագահը տեղից վեր կացավ և հնչեցրեց սեղանի փոքրիկ զանգը:

— Ընկերներ, գուցե կետեր և խնդիրներ կան,

վորոնք զեկուցողի կամքից անկախ չլուսաբանվեցին
և մութ մնացին շատերի համար:

— Արդեն, արդեն...

— Պատրաստ են հարցերը...

Գրավո՞ր...

— Կարելի յէ և բանավոր...

Մի բոպեյում նախագահի սեղանն սկսեց ծածկ-
վել հարցաթղթիկներով: Ջյուն եր իջնում ասես բա-
րակ, կամ, զարնավերջի զեփյուռը թափում աքասիա-
յի թերթերը շտապ:

— Հերթը, ընկերներ, ըստ եյության արտահայտ-
վողներին ե. շտապեցեք ցուցակագրվել:

... Բազրատունի, Նաթանյան, Զեմիլե Ահմեդ-
զադե, Լուկաշեկիչ, Զալաշվիլի Նինա, Մելքոնյան Ատ-
րինե...

Մի ակտիվ և ժիր բանվորունու յելույթն ամբող-
ջապես կլանեց բանաստեղծ՝ Վարդգեսի ուշագրությու-
նը: Անչափ ուշագրավ եր այդ բանվորունու, Մելքոնյան
Ատրինեյի քննադատական խոսքը, Նրա համար
գուցե, վոր անակընկալի նման հայտնվեց նա, ներ-
քին և թաքուն մի ուժ բռնկեցնում, եր նրա հայտնա-
բերած յուրաքանչյուր միտքը, թեթև սխալներով
կազմված և դեռ ևս անգրագետ ընդդիմախոսի նախա-
դասությունները: Այդ կարճահասակ ու ձվաձև դեմ-
քով կինը, վոր ակնոցներ ուներ քթին և կարճ կտրած
մազեր զլին, յերեսում եր, վոր դիտել եր իր շրջա-
պատն ուշագրությամբ, նկատել յուրաքանչյուր ան-
ցուդարձը, ծրագրված և կյանքում կիրառված աշխա-
տանքները, այդ աշխատանքի ընթացքին ի հայտ

յեկած թերիները, դեռ ևս խորթ և աչքիդ փշի պես
յերեացող նկատելի բացերը:

Զեկուցողն սկսավ անհանգստանալ: Նախագահը
ժպտում եր, ժողովականները բուռն հետաքրքրու-
թյամբ տարվել...

Ատրինեն նստեց, մինչդեռ նրա հասցեյին ուղ-
ղված ծափողջույնը վողջ ժողովաբանը թնդաց-
նում եր:

Կարծես մի հրաբուխ դադարեց գործելուց, հան-
դավ մի ժամանակ և շուրջը թողեց տաք լավա:

Ժողովն ալեկոծվեց գարճյալ, յեռաց, տրամա-
դրություններն իրը տեղատվություն իջան... խա-
ղաղվեց:

Ժողովում, Ատրինեյի կողքին նստած փոքրիկ
Արմիկը կմեծանա, կհիշե իր անհանգիստ, յերեսները
քրտինքով ծածկված և կարմիր լալա խնձորի պես
մայրիկին՝ այդ ուրախ վայրում: Հեքյաթի պես կհի-
շե այդ որն Արմիկը: Հեքյաթի պես ծիածանային կը-
թվան նրան այդ ըստեները: Բազմաթիվ գեմքերի մի-
ջից մայրիկը կբարձրանա իր աչքի առջև—կինդանի
և պայծառ լուսագծերով... Արմիկը կմտաբերե և այն
ձեռնափայտը, վորն իր զիմացի աթոռից կախված եր,
և, գլխին գանգրահեր շնիկի քանդակ ուներ:

Հապլշտապ և արագ են թոշում մեր որերը: Ասես
քամի յի փշում անդադար, ուժգին և տանում խա-
րույկի բոցերն ոճաձեւ:

Սակայն, թոչող այդ որերը հարուստ են: Նրանց
վրա, ինչպես պատառուան, բայց պատմական դրոշա-
կի վրան, պայքարի, մագլցելով բարձրացումի և կա-

ուսցման հիշատակների հետքեր կան դժվարացինջ...
կան. շատ կան:

Ամիս ու կես առաջ եր, յերբ Վարդգեսն ու նրա
գրականագետ ընկեր (վորը միաժամանակ և ճարտա-
րապետ եր) Հրաչյան գնացին քաղաքի յերկաթուղա-
յին կայարանի գեպոյին այցելության:

Վորոշված ժամին նրանք հանդիպեցին իրարու-
բանկոպի խոշոր շենքի առջև և մեկնեցին:

Ժխուր եր յեղանակը, անձրևում եր մանրամաղ,
Վերեն-Տերյանական մելամազնություն եր բերում
անձրեն իր հետ: Սակայն, նրանցից և վոչ մեկը տա-
քուկ սենյակում փակվելու և «թախծերդ» գըելու սիրտ
և ժամանակ չուներ: Նրանց առնում եր կրակի և յեր-
կաթի կարուր: Ինչ փույժ թե մանրամաղ անձրեն
առատացավ, յերկաթուղու կայարանից գեպի գեպոն
յերկարող ճանապարհը դարձավ ցեխոտ և լպրծուն:

Գրասենյակում—կաղլիկ և համակըելի յերիտա-
սարդ ծառայողը սիրով ընդունեց նրանց:

Խոշոր դարպասի մի փոքրիկ դռնակից ներս մը-
տան:

— Սա յե դուռն «դրախտի կորուսյալ», ասաց
Հրաչյան կատակով:

Ապա նրանց առջև բացվեց մի ընդարձակ տա-
րածություն, ուր կառուցված եր գեպոն իր բազմա-
թիվ ստորաբաժանումներով: Բանաստեղծ Վարդգեսը
հազիվ թե տեսել եր այդպիսի մի խոշոր գործարան և
հետաքրքրվել նրանով լիովին, մանրամասն: Գրքերի
ընթերցանության ընթացքին անշուշտ նա հանդիպել
եր նրա նմաններին, «տեսել», բայց այլ և խնդիրը,

յերբ անձամբ կանգնած ես իրականության հան-
գեպ, յերբ այդ իրականությունը ձնշում և վրադ
հաճախ, զգացնել տալիս իր ուժը տիտան: Նա
հիրացնում և քեզ զարմացնում. գու մնում ես այդ
վայրում քարացած մի պահ, բերանաբաց, և... հիազար-
հուր:

Այդպիս եր Վարդգեսն այդ ժամին—կանգնած
այնտեղ:

Առաջին հերթին նրանք անցան շոգեմեքենաների
նորոգման բաժանմունքը, ուր ամուր և անառիկ բեր-
դերի նման կանգնել եյին շոգեմեքենաները. իսկ նրանց
գագաթներին—աղմկում մուրճերն անդուլ: Այստեղ
բանվորների մեծամասնությունը յերիտասարդներ ե-
յին, կենսուրախ և աշխուժ. կային նաև մի քանի հա-
սակալորներ, վորոնք ցուցմունքներ եյին՝ անում և
հսկում ուշադիր:

— Հենց այս բաժանմունքում մի ամիս պիտի
լինել ծանոթանալու համար, ասաց Վարդգեսը, մի
ամիս՝ վերցնելու այն՝ ինչ անհրաժեշտ և քեզ, առ-
նվազն մի ամիս...

— Շատ քիչ և մի ամիսը. դու պետք ե սովորես
թևերդ, սիրելիս, աշխատանքի լծվես սե, դառնաս ոբ-
րանց պես, սրանց ընկեր, մի խոսքով բանվոր...

Ահավասիկ մի ուրիշ բաժանմունք, ուր և ամբող-
ջապես տիրապետող տարրը հանդիսանում եր կրակը:
Կրակը, վոր բորբ եր միշտ, կարմիր, լափող: Յերկա-
թը հալչում եր նրա բազմավատիկ ջերմության տակը
և դառնում հրաշել ու լույծ հեղուկ: Մի փոքրիկ, ան-
զգույշ քայլ, և ահա հեղուկ յերկաթը թափկեց վոտ-

ոռւցման հիշատակների հետքեր կան դժվարացինչ...
Կան, շատ կան!

Ամիս ու կես առաջ եր, յերբ Վարդգեսն ու Նրա գրականագետ ընկեր (վորը միաժամանակ և ճարտարապետ եր) Հրաչյան գնացին քաղաքի յերկաթուղարին կայարանի դեպոյին այցելության:

Վորոշված ժամին նրանք հանդիպեցին իրարուբանկոպի խոշոր շենքի առջև և մեկնեցին:

Տիուր եր յեղանակը. անձրեւմ եր մանրամաղ. Վերին-Տերյանական մելամաղձություն եր բերում անձրւն իր հետ: Սակայն, նրանցից և վոչ մեկը տաքուկ սենյակում փակվելու և «թախծերգ» գրելու սիրտ և ժամանակ չուներ: Նրանց առանում եր կրակի և յերկաթի կարուտը: Ինչ փույժ թե մանրամաղ անձրւն առատացավ, յերկաթուղու կայարանից դեպի դեպոն յերկարող ճանապարհը դարձալ ցեխոտ և լպրծուն:

Գրասենյակում—կաղլիկ և համակրելի յերիտասարդ ծառայողը սիրով ընդունեց նրանց:

Խոշոր դարպասի մի փոքրիկ դունակից ներս մըտան:

— Սա յե դուռն «դրախտի կորուսյալ», ասաց Հրաչյան կատակով:

Ապա նրանց առջև բացվեց մի ընդարձակ տարածություն, ուր կառուցված եր դեպոն իր բազմաթիվ ստորաբաժանութերով: Բանաստեղծ Վարդգեսը հազիվ թե տեսել եր այդպիսի մի խոշոր գործարան և հետաքրքրվել նրանով լիովին, մանրամասն: Գրքերի ընթերցանության ընթացքին անշուշտ նա հանդիպել եր նրա նմաններին, «տեսել», բայց այլ և խնդիրը,

յերբ անձամբ կանգնած ես իրականության հանգեցի, յերբ այդ իրականությունը ճնշում ե վրադհաճախ, զգացնել տալիս իր ուժը տիտան: Նա հիացնում է քեզ, զարմացնում. դու մնում ես այդ վայրում քարացած մի պահ, բերանաբաց, և... հիազարնուր:

Այդպիս եր Վարդգեսն այդ ժամին—կանգնած այնտեղ:

Առաջին հերթին նրանք անցան շոգեմեքենաների նորոգման բաժանմունքը, ուր ամուր և անառիկ բերդերի նման կանգնել ելին շոգեմեքենաները. խկ նրանց գագաթներին—աղմկում մուրճերն անդուլ: Այստեղ բանվորների մեծամասնությունը յերիտասարդներ ելին, կենսուրախ և աշխուժ. կային նաև մի քանի հասկակարներ, վորոնք ցուցմունքներ ելին՝ անում և հսկում ուշադիր:

— Հենց այս բաժանմունքում մի ամիս պիտի լինել ծանոթանալու համար, ասաց Վարդգեսը, մի ամիս՝ վերցնելու այն՝ ինչ անհրաժեշտ է քեզ, առնվազն մի ամիս...

— Շատ քիչ ե մի ամիսը. դու պետք ե սովորեալ սիրելիս, աշխատանքի լծվես սե, դառնաս ուրանց պես, սրանց ընկեր, մի խոսքով բանվոր...

Ահավասիկ մի ուրիշ բաժանմունք, ուր և ամբողջապես տիրապետող տարրը հանդիսանում եր կրակը: Կրակը, վոր բորբ եր միշտ, կարմիր, լափող: Յերկաթը հալչում եր նրա բազմապատիկ ջերմության տակը և դառնում հրաշել ու լույծ հեղուկ: Մի փոքրիկ, անզգույշ քայլ, և ահա հեղուկ յերկաթը թափվեց վոտ-

ներիդ, ձեռներիդ կամ մարմնիդ մեկ ուրիշ մասի վը-
րան և խաշեց մի ակնթարթում:

— Կաղապարները պատրաստ են Ավո:
— Պատրաստ են, Յելիզաբար:
— Ե՞յ, զգուշ, պղնձի պրունկը գեսն արա...

Հեղուկ յերկաթը լեցվում ե բազմազան կաղա-
պարների մեջ և սառչում աստիճանաբար, սեանում:

Ավոն հիշեց անշուշտ Շիրակի գաշտն ու բոցա-
ծավալ վերջանույսը գաշտում: Դիշերը հասնում եր,
հանդչում եյին կրակները և հորիզոնը դառնում եր
սե-մութ...

Անդին՝ Սանդրոն և Սուլհին հավաքում են մե-
քենաների սառած և արգեն պատրաստ մասնիկները:

... Մի փոքրիկ և նեղ անցք նրանց տարավ կող-
քի բաժանմունքը: Այսուղ, գորակյալ բանվորների
հսկողության ներքո և համեմատաբար քիչ աղմուկի
միջն մեջենաներն իրենց պողպատ սուրերով տաշում
եյին յերկաթը, վորոշ ձև ու չափի ըերում: Այնքան
սուր եր պողպատը և այնքան անզոր յերկաթը նրա
ներկայության, վոր քեզ թվում եր, թե պանրի պես
եր տաշվում վերջինս:

Անցան: Հետո նորեն հնոց ու կրակ, ավելի ձա-
ձանաշգեղ ու հրապայծառ: Նորեն յերկաթ և ահա-
գնաղորդ մրճահարումը սաւերին, նորոգվող մեքենա-
ներին, կաթսաներին, վագոններին... Զգվում են մը-
կանները յերկաթ, ուռչում են մկանները պողպատ:
Հորդում են մկանները—ձևավոխելու կյանքը տարեց-
տարի, որեցոր, ժամե-ժամ... Դժվար և զատորոշել դի-
մագծերն այսուղ, ծանոթներ վորոնել կամ, Բոլորն

մրոտ են և ծխաղատ, բոլորն ել կրակի արեգա-
կովը լուսավոր:

Կրակ ու յերկաթ...
Ցեղեաթից ու կրակից ձուլված մի ահազին հա-
մանվագ, մի դաժան սինֆոնիա...

... Բանաստեղծ Վարդգեսն ընկավ մահճակալին
և փակեց աչքերը ճիգով: Սակայն նրա կարճատև քու-
նը խռովուն եր և ալեկոծ, ինչպես յերեկվան այն ժո-
ղովը, ինչպես մի ամիս ու կես առաջ տեսած և այժմ
մտաքերած հսկա գործարանը:

— Կարծես բոլորովին չեմ քնել այս գիշեր,
մասաւ:

— Դրաւսաւ ե, վորդի ջան, ով կարտ քնի սա-
վոտվա կողմը...

Կիսալույս եր որը, անարևս: Ջուն եր գալիս
դուրսը, խաղաղ ու անզորբավետ: Ցեղեկ զիշերվա հար-
ցաթերթիկների նման թափում եր ձյունը:

— Մամաս, մի բաժակ թեյ, կանչեց Վարդգեսը և
զրամեղանի զլուխն անցավ, վերցրեց զրիչն ու ձյունի
պես մաքուր աշխատանքի բլոկնոտը:

Նրա ուղեղում իրարանցում եր և խուճապ, շար-
ժում ու յելեկչ... Հանկարծ մեկը մազլցելով բարձրա-
ցավ և նստեց ուսերին, մեկ ուրիշը թեքվից և նայեց
աչքերին: Յեկան նորերը,—Արտինեն, Ավոն, Յելիզ-
բար... Մի հուժկու և համարձակ ձեռք ձյունադաշտի
սափանն այրեց ասես, լուսթյունը հանգավ աղոտ լամ-
պըն ինչպես, և Վարդգեսը տեսավ դեպոն, դարձյալ
բացակառ, խլուսուն... Յես ձեղ կհանդիպեմ ասաց բա-
րցակառ, յես ցույց կտամ ձեղ իմ կտավը, վորի

վրա յես աշխատում եմ խենթի պես, ուր, շրջանում
եք դուք, ապրող, կերտող, կենդանի...

Ժամերը լողացին, անցան,—տասը, տասնըմեկ,
տասներկու... յերեք:

Վարդգեսն աշխատում եր տագնապով և տագնա-
պի հետ հրճվում: Թերթերը կապտագույն և վոլորուն
գծիկներով ծածկվեցին մի առ մի, ընկան հատակին,
շուրջը...

Եսկ դուրսը ձյուն եր գալիս դեռ, լուսոփաթիլ
ու նազերով: Ջյունը նստում եր շերտ-շերտ, վորպես
ստեղծագործող բանաստեղծի հաճույք նրա հոգեխոր-
քերում:

Չե՞ վոր վաղը, առատահոս ձյունից վերջ, դա-
րունն ավելի հորդ զիտե բացվել և ամեն լուսա-
մուտ ավելի կենսավետ ժպտալ...

1929 թ. Գերարդար
(Թիֆլիս)

ՎԵՐԱԴԱՐՁ

...Heureux de sentir battre en lui
le pouls de la vie universelle...

Romain Rolland

ԻՐԻ ԱՌԱՋԱԲԱՆ

Առանձնապես վո՞չ մի գժբախտություն չի պատահել իմ կոմունիստ բարեկամիս. նա առլում ե, գործում կրկին մեր իրականության մեջ և ծառայում իր կուսակցությանն և իր յերկրին. Միայն, յերբ ծովափնյա մի քաղաքի հյուրանոցներից մեկում, սեպտեմբերյան գեղեցիկ մի լուսաբացին բաժանվեցինք իրարից—մոռացմամբ նա սեղանին թողեց իր ինքնաձնադիր հուշաբետը:

Յես վերցրի այն, իրը հաճելի անակնկալ թերթեցի, հետո՝ փոքրիկ կրծառումներով (վորոնք հիմնական և շոշափված հարց ու խնդիրներին վոչնչով չեն մնասում) վորոշեցի տպագրության հանձնել:

Վ.

928 թ. սեպտ. 4—12
(Ծաղկերի)

7 հուլիսի, 927...

Ինչպես հոգնած եյի յերեկ, իսկ այսոր ուրիշն եմ կարծես, բոլորովին տարբեր մարդք: Յես հանգստանալու յեմ յեկել այն հարկի տակը, ուր ծնվել եմ մի յերկու տասնյակ ու կես տարիներ սրանից առաջ: Այն փոքրիկ սենյակը, ուր իմ մահճակալն ե տեղավորված, վորքան հարազատ ե ինձ. յես նրան իմ հինգ մատներից ավելի լավ գիտեմ:—Դասագիրքա փակած և հոգնած պահերիս քանի-քանի անգամ յես համրել եմ նրա առաստաղի գերանները: Նրանցից մեկի վրան մի տարրինակ նշան կար, խիստ նման այն ժամանակ մեր թաղեցի տուող Արտոյին, նրա պես մորվեղ, քիչ ել շեղ աչքերով: Հիմա բավականին փոխվել և այդ տարրինակ նշանը կարծես. կարծես այլես վո՞չ վոքի նման չե. բայց ելի նույնն ե. միայն շատ քիչ տառող Արտոյի նման:

Ահա և պոյետի նույն նկարը՝ պատիցը կախ: Նա ժպտում ե դարձյալ. նրա ժպիտը նման ե իմ մանուկ սրերին անհոգ. նա ինձ առում ե կարծես.—Բարի յես յեկել լավ տղա, հիշում ես, յերբ ձեր կովերին արածացնելու եյիր տանում հանդը՝ յերեկոյան վերադառնում եյիր հոգնած և արևախաշ. իսկ յերբոր քեզ դըպ-

լոց տարան և մի փոքրիկ ժամանակ սահեց՝ առաջին
անգամը հատկապես քեզ համար գրած «Անբախտ
վաճառականներ»-ն ապա «Գիքոր»-ը կարդացիր:

Հետո ուրիշ, ուրիշ շատ բաներ կան այստեղ,
վորքան սիրելի—նույնքան հարազատ: Այս, այն կոտ-
րած գութանը, վորի մաճը յես բռնել եմ մանկութ՝ իբր
ողնական հորս հողագործ: Ծանը գնում եյինք յես, նա
և յեղները, սեահողը բացվում եր շերտ-շերտ, ծուխ եր
բարձրանում հողեցը կարծես: Արեի պես ցնծում եր
հորս սիրաը, արեի պես ծաղկում եր իմ հոգին:

8 հուլիսի,

Նախաճաշս խիստ շտապ վերջացլիւ Դժվար և
այլևս բանտարկվել սենյակի չորս պատերի մեջ. հե-
տաքրքրությունն ու կարոտը ծեծում են հոգուս գըռ-
ները թակ-թակ: Իջնում եմ մեր փոքրիկ և հասարակ
սանդուխից, բակում մի ձեռնափայտ եմ գտնում.
Հաճույքով վերցնում և խաղացնում ձեռքումս, նորեն
վողջունում եմ մորս, վոր գես ու գեն և վազում, բայց
միենույն ժամանակ գաղտագողի հետեւում ինձ շարու-
նակը քննում շարժուձերս. իր հայրացքներով: Նըա
դեմքին բաղդավորության լույսեր են վասվում, յես
այդ զգում եմ պարզապես, առանց այլկայլության,
վորովհետև այստեղ և այս խնդրում միծ հոգեբան լի-
նելու կարիք չկա... Մայրական զգացումը ամենեն
ավելի բացահայտն և արտահայտիչը, ամենեն ավելի
անկեղծը: Նա անխառն և անարատ իր կթած կովի
կաթի պես: Այդ զգացումը ծնվում և մեր առաջին ձի-
չի հետ. նա տարերային և, լի բռնկումներով, ջերմու-

թյամբ և աննման անձնազոհություններով, յերբեք նա
պահարզանի սեղանին չի մոտենում. այդ մտահղա-
ցումը նրա համար տարորինակ և անբնական:

— Ճաշին չուշանաս, Խուբեն ջան, հենց վոր խըն-
ձորենու շուքը գոմի դռանը հասնի՝ դու ել տուն կը-
համսես:

— Լավ, լավ, բարի մամաս, հենց վոր մեր խըն-
ձորենու շուքը գոմի դռանը հասնի, պատասխանում
եմ յես:

Ճանապարհը լայն և և արեւով վողողուն: Զգում
եմ, վոր բնության մի մասնիկն եմ յես, այնքան ան-
բաժան՝ ինչքան այս բարդին իր արմատից:

Վոտքս ճողփաց հանկարծ ջրի մեջ. ինչ անուշա-
դիրն եմ յեղել. չեմ նկատել վոր առջևից զլղալեն
մի առվակ և հոտում վճիռ: Սա ինձ ծանոթ եմ ման-
կության ընկերներիս պես. սրա ափին յես պարտեզ ու
բոստան եմ խաղացել Նալբանդանց Համակի հետ: Ուշ
երիկնապահներին, հանդից վերադառնալիս, մեր կովերը
սիրում եյին կանգ առնել և այստեղ, հոտոտել գես ու
դեն, դունչերնին մոտեցնել ջրին և կուշտ խմել բաղցը
ճաշերից հետո: Սակայն, աջ կողմս մի նոր անտառակ
և բուսել զվարթատեսիլ և մատղաշ: Միթե՞ այս մա-
տաղատունիերը չի կարելի համեմատել մեր պատկոմ-
ների հետ: Սրանք կմեծանան և հասակ կըաշեն այն
ժամանակ, յերբ մերոնք ել հնարին կփոխարինեն: Ճա-
նապարհս մի կարմրավուն շնչք ել ցցվեց: Սա յիշ Ան-
տառային Վարչությունն և կառուցել անշուշտ:

Այլևս արտերի միջովն եմ անցնում կանաչ, կա-
նաչ ու զմրուխտ: Բանաստեղծներն արտերի ծփանքը
ծովի կոհակավորմանն են նմանեցնում հաճախ, համե-

մատությունը վատ չե կարծես: Սակայն տարբեր, գուցե մի քիչ ավելի նոր և տարրորինակ տպավորություն կրեցի յես այս անգամ: Թվաց ինձ, վորհիացքի խոսք են լսում սրանք, մոլորակային մի հոետոր նոր խոսք և ասում անզուգական, ցարդ չլսված մի ճառ, իսկ սրանք զգույշ՝ լսում են, ապա սվավոցներով միայն իրար ականջին հաղորդում իրենց զարմանքը, հիացումն ու համաձայնությունը: Թվաց ինձ ասում եմ, վորովհետև վախենում եմ պնդել համեմատությանս գեղարվեստական լինելու մասին...»

Մերթ ընդ մերթ կանդ եմ առնում—վերհիշելու և ավելի մանրամասն դիտելու շուրջաւ: Արտերի մեջ տերեփուկներ կան կապտաթիրթ, ինչպիս նաև նուրբ ու հոտեան կարմիր ծաղիկներ: Ծովում և մեկ-մեկ քաղում եմ սրանցից, ուրիշ նորերից և մի փոռնջ կաղմելու ցանկությամբ շարունակում աշխատանքս:

— Բարի ո՛ր, ուսթա Ոհան:

— Այ տղա, եղ ինչքան ես փոխվել, քիչ մնաց ձանաչելի վոչ:

Մի սրտալի խոսակցություն ծայր և տալիս մեր միջեւ:

— Ուսթա Ոհանը չեր փոխվել զրեթե, մի քիչ միայն ծերացել եր. ձյունաթույր մազերի հավելումներն եյին մատնում այդ:

Հետաքրքիր մարդ և ուսթա Ոհանը, տաղանդավոր գյուղացի, հիշում եմ, նա թե ներիմ եր, թէ սափրիչ, թէ հողագործ և թէ բազմաթիվ ընտանիքի պարտաճանաչ հայր: Հեռվից յերեսում ե նրա սպիտակ ներկած տունը: Նրա մեծ տղան տաղանդավոր նկարիչ և արդեն:

10 հուլիսի,

Յերեկ ուսթա Ոհանից բաժանվելուց հետո—ուղղակի անտառը մտա յես: Բուրազեղ սոճիներ և շքեղ յեղենիներ չկային այստեղ. բայց, սրանց վոխարեն հոյակապ և բազմածյուղ սաղարթավոր ծառերը դարդարում եյին անտառը: Գեղեցկությունն այստեղ վայրի յեր ավելի և ահազդեցիկ: Հով կար անտառում ինչպես լինում ե առնասարակ. ծառերի հսկայական գագաթներն որորվում եյին, դառնում ծանր գլանակների նման ալիքաձև, իրենց շուրջը ինչնվոր նկարում ծանրագիծ: Նատեւ եյի կանանչին, կոնակս հենած մի խոզոր ծառաբնի և յերազում: Հոգիս լցվեց բնության փայտայանքներով, սիրով՝ լի ու հորդառատ: Տարիներ են անեցել և յս ընտելացել եմ քաղաքի ազմուկին, յեռ ու զեռին, չափին, ձերին և բազմատեսակ աշխատանքներին: Հիմա, այս հանկարծակի տեղափոխությունը ինձ դրել և ուրիշ մթնոլորտում, կախարդական այլ աշխարհում:

... Ոհան, միթե՞ ինձնից զատ ուրիշ մարդիկ ել կան անտառում. չե՞ վոր ծիծաղեցին, այն ել զիլ ու հնչուն: Զար ու փոքրիկ սատանիները այստեղ ել են թափանցել...

Աղջիկներից մին մատը խածեց. կարծես ձանաչեց ինձ:

— Միթե՞ այստեղ եք դուք ընկ. Ուուրեն, մանմենակ և այս գեղեցիկ անտառում:

— Յես ճգնելու յեմ յեկել այստեղ, հրաժարվելով հրաժարվեցի աշխարհից, քմծիծաղով պատասխանում եմ յես:

— Յեթե այդպիս և, յես ազատ կթողնեմ ձեզ և
իմ յերկու լավ ընկերուհիներիս չեմ ծանոթացնի ձեռ
հետ... պարտավորված:

— Իսկ յես պարտավորված յետ կվերցնեմ իմ
հրաժարական-խոստումս՝ ծանոթանալու համար ձեր
«լավ ընկերուհիների» հետ...

Հայտության ուղին բացվեց և արգելքները վերա-
ցան: Հինգ րոպեից հետո մենք նստել եյինք միասին
դաշտի գորգի վրան, իսկ մեր գլխավերնը — հսկայական
ծառերն եյին ու հովի տարորինակ համանվագը:

Իմ ծանոթուհի Զատկի նորկայացրած յերկու
ընկերուհիներից Հասմիկն եր ամենն հետաքրքրաշար-
ժը, հայկական փոքր ինչ կոր ու նուրբ քթով, աչքերը
խորունկ ու խոշոր, կարծես թափանցիկ մշուշով պա-
տաճ: Նրա մորթը աղոտ եր թեթևակի ու թափային:
Զգիտեմ ինչպես և վորպիսի գուգազիալությամբ յես
կաշկանդվեցի նրանով հանկարծ: Իմ հայացքը առկախ
մնաց նրա հայացքից — ինչպես նրա ժակիտը բարակ ու
ծաղկուն իր բերնի նուրբ անկյուններին ակոսված:
Յեվ մեր այս առաջին հանդիպումին նույնիսկ, իսս
ժամ չանցած, յես խայտառակիցի փառավորապես...
խոսակցության ընթացքին:

— Յես իսկույն կպատասխանեմ ձեզ, ասի Հաս-
միկին:

— Իսկ յես ձեզ հարց չեմ տվել ընկ. Ռուբեն, —
պատասխանեց Հասմիկը լուրջ կերպով:

Մի ուժեղ քահ-քահ վրթավ, աղջիկները մարելու
չափ ծիծաղում եյին և հասկանալով կարծես, աշխա-
տում եյին մատնացուց անել իմ ներքին տրամադրու-

թյունը, վորն այնպիս շուտ ստեղծվեց ընության
դրկում:

Յես վորոշեցի լուրջ մնալ և նրանց «անտեղի
կասկածը» ցրել փոխել խոսակցության նյութը պա-
տերազմիկ մարդու ճարպիկ մի մանյովրով: — Գրեթե
հողծածուկ յեղավ իսկույն և մնաց մատնիչ ըոպեն, բայց
իմ ներքին ինքնասիրությունը վիրավորված եր
խիստ: — Միթե՞ կարելի յե առաջին ծանոթացած աղ-
ջկանը զարնվել խոռվել նրա առաջին հայացքներից,
մտածել միայն և միայն արտաքինի, զեղանի դեմքի,
աչք ու հասակի մասին... Հապա ներքին այն հարուստ
բովանդակությունը, վորն իմաստավորում ե քո, նրա
և ձեր յերկուսի շրջապատի կյանքը: Յես ցանկացել եմ
միշտ եր վոր կնոջ հոգին ընդհանրապես, իսկ իմ ապագա
ընկերուհուն մասնավորապես, լինի հետաքրքիր, հետա-
քրքրվող, բազմաթերթ, ընդունակ տեսկան բեղմնա-
վորման: Նա պետք ե քայլի ինձ հետ մեր այսորվա
բարդ և ծնվող և ստեղծագործ կյանքում, դրական
մասնակցություն ունենա նրա մեջ նրա վերելքին,
դիմանալ կարողանա նաև նրա ծանր և դժվարին որե-
րին, ևն, ևն:

14 հուլիսի,

Մեր ներքին և արու մարդու պահանջը, մեր
ներսի թելազրությունները ձևակերպում են յերեմա
մեր կյանքը և մեզ դնում հաճախ այնպիսի գծերի
վրա: Վոր մենք ել չգիտենք, թե վորպիսի կայարա-
նում կանգ առնի պիտի մեր զնացքը:

Այսպէս և դժբախտաբար:

Յեթե յես աշխատեցի ծածկել հետաքրքրությունս
ինձ ծանոթ աղջկներից Հասմիկի մասին, բայց յես
չկարողացա համոզել ինձ և սանձահարել տրամադրու-
թյունս այն պահուն, յերբ արյունը խայտում եր յե-
րակներումս և ինձ մղում դեպի նաև Յեկ յես ակամա
մոռացության մատնեցի սրանից չորս և ավելի որեր
առաջ ունեցած մտադրություններս, ունեցած աեսա-
կետ-վորոշումներս, սկզբունքս...

Յես ցանկացա Հասմիկին հանդիպելու նոր առիթ-
ներ ստեղծել, մի փոքրիկ դոնակ բանալ հոգուս վրա
և զգացնել նրան, վոր ինձ թովում են նրա ձեւը
նազենի, նրա ձեռների նրբությունը, մաղերի հյուսկե-
ները սև, ողակ-ողակ ուժագալար, Յես յերազեցի այն
յերջանիկ որվա մասին, յերբ նրա փոքրիկ բերանը
կրացվի և կեռաս շրթները շրթներիս կհպին - դողի
մատնելով և ինձ և սիրուս... - Յեթե չեմ սխալվում -
սրան առում են սկիզբն սիրահարության, կամ, յերկու
վոտքով պինդ կանգնել սիրո նախադպանը:

Հասմիկ... նրան անուն և, չե՞: Բուրավետ և
սպիտակ թիրթիկներով ծաղիկ և հասմիկը. այնքան
նուրբ և բուրում նա արշալույսի ժամերին, վոր իր
բույրն ել թվում ե քեզ նրբորեն սպիտակ... Հենց այս-
տեղ, իմ հայրենական հարկիս մոտիկ, մոտիկ այս
բնությանն սքանչելի և անտառին, յես ինձ և նրա
համար մի տնակ շինել կտամ, կարմիր աղյուսից մի
տնակ, ուր և, կապրենք մինք:

(Ո՛, յերիտասարդ մարդու շքեղ յերազներ):

17 հուլիսի,

— Յես զարմանում եմ ինձ վրա, ինչպես համա-
ձայնեցի մինակ գալ ձեզ մոտ, ընկ. Բուրեն:

— Ի՞նչ հիանալի յերեկո յե, յես եմ և դուք. ել
ուրիշ վո՞չ վոր, զարմանալու փոխարեն յես անչափ ու-
րախ եմ...

— Յես... յես վո՞չ այնքան, յես վախենո՞ւմ եմ...

— Սատանաներից...

— Ավելի շուռ՝ մարդ սատանայից:

Սկսավ մթնել արդեն, Գիշերը հսկայածե ու կա-
պույտ ծաղկի պես բացվում եր հետզհետե անտառների
և դաշտերի վրան, լուսնի մի փոքրիկ շերտ գերանդիի
կեռ ծայրի նման մեխվել եր կապույտ կամարում —
շուրջը աստղերի կայծոռիկներ ցանելով: Գիշերը կա-
պույտ եր, կիսալույս և հովասուն:

Եենաբարձ մի սայլ ճոնչալով նշանարվեց հան-
կարձ. իսկ սայլին հետեւող խոշոր գամփուր ընդուսա
ցատկումներ գործելով սկսավ հաջել: Խուճապի մատ-
նված և վախի գողերով բռնված Հասմիկը մի ձեռք, մի
ապաստարան եր վնասում բնազդաբար: Իսկ այդ
«ձեռքը», այդ «ապաստարանը» յես եյի այդ իսկ ըո-
պեյին. Նա իմ ձեռքումն եր և իմ կրծքին վահանաձև,
և այն, վոր պիտի աջողվեր ինձ յերկար աշխատանքից
ու հնարազիսությունից հետո՝ տեղի ունեցավ արագ,
գրեթե հանկարծակի, մեկ ակնթարթում, պատահական
մի «աղետի» պատճառով:

Վայելքի վորպիսի բոպեներ եյին, վոր ապրեցի
յես այդ ժամերին: — Գարուն եր, վարդերը վառվում
եյին և բուրում զգլիսիչ, ջութակի մի ջղուտ յերգ տա-

նում եր ուշքս, ինձ բոլորովին անծանոթ բույրեր արձակող մի սրվակ մոտեցրին սունդերիս: Բարկ ու հաշիմի պես թմբեցնող եյին այդ բույրերը: Ինքինքս մոռացել եյի մի պահ կամ ուշաթափել...

Այդ գիշեր յես ամեն ինչ ասի Հասմիկին գրեթե, և իմ սկզբը, իբր թանկագին պարունակությամբ լեցու: մի սափոր, թափեցի նրա առջև: Այնպէս անկեղծ եյի յես այդ գիշեր, այնպէս հանդուզն: Յես վորոշել եյի գրավել բերդն իմ յուրաքանչյուր ընդունակություներս ցուցազրելով, արվի ամեն գենքերովս:

Յերթալով գիշերն ավելի խոտացավ. լեռնատարած անտառները նիբռնեցին, իսկ մեր աջ կողմը, հեռավոր տարածության վրա և հազիվ նկատելի, խարույկի կրակներ շողացին:

— Ո՞վ վառեց այդ պայծառ կրակը այդքան հեռուներում. միթէ իմ սրտում բոցավառվող կրակը նման չե այդ հեռավոր խարույկի կրակին, Հասմիկը ասի յես բավականին բարձր ձայնով:

— Խենթ-խենթ բաներ ես խոսում սուտիկ տղա, և ընդհատելով իր հասմիկի նուրբ թերթիկե ձեռքովը փակել ուղեց բերանս:

Յեպավ մի պահ, յերբ ամեն ինչ մոռացա յես. այդ պահը գերերկրային եր, ուրիշ ուրիշ աշխարհում լինելինք կարծես, — յետ յետ եյին գնում լեռները, հովք դառնում եր ավելի բուրագեղ և թևաբախ, ջրերը՝ մըրկաշունչ համանվագ, իսկ խարույկի կրակը գնալով մեծանում եր, հրդեհի փոխվում գիշերային մուգկապույտ փոնի վրա... .

Ուշ եր, կես գիշերվա մոտ, յերբ վերադարձանք մենք: Մեր փոքրիկ քաղաքի փողոցները ամայի եյին գրեթե, զիշերապահներն եյին միայն հսկում վորոշ կետերում և անցնում հատ ու կենտ մարդիկն ուշամնա: Յերբ վերջին անգամ նայեցի Հասմիկին՝ հիշեցի վոր նրա մազերին կայծոռիկներ եմ շարել յես, դարձրել նրան ավելի քան ֆանտաստիկ և գեղեցկատնեսիլ:

19 հուլիսի,

Յերեկ իմ հին և լավագույն ընկերներիցս մեկց—Յերվանդից մի նամակ ստացա, բավականին յերկար և մանրամասն նամակ: Նրա ընթերցումը, անցեղծն ասած, իմ կենսուրախ տրամադրությանս վրա մի խոշոր ստվեր ձգեց: Մտածում եմ իմ բանաստեղծ ու տաղանդաշատ ընկերոջս մասին և թափծում այսոր ապա համեմատում իմ ներկա դրությունս, “ տրամադրությունն և ապագա բեղուն հեռանկարներս և ըախտավոր զգում ինքվինքս:

Մի շաբաթ առաջ վերջացրի «Յերկրիս Պայծառությունը» քերթվաճներիս վերջին շաբաթ, զրում ենս ինձ: Խանդավագած եմ, յերբ զրում եմ, յերբ կարգում եմ զրածս, սրբադրում նորեն ու նորեն: Ստեղծագործելու պլրոցեսը տարօրինակորեն հետաքրքր քիր ե, քանդվում են չինական պարիսպները, ամեն արգելք, խութ կամ խարակ, իսկ զու զնում ես աղաւարգելք, խութ կամ խարակ, իսկ զու զնում ես աղաւարգեն, բնության մեջ, սիրելի հերոսիդ կամ նրան հակագիր տիպերի հետ: Վոչ վոք չի հանդինում կտրել ձանապարհգ, ժամանակակից ուզգմի տեխնիկան և իր բոլոր միջոցներն անզոր են պայքարելու քո գեմտ Դու

սուր ես այդ պահուն, սաբսափ, հեծելակոր և հրետանի, ոտզմանավ և զրահապատ գնացք, գնդացիր կամ խեղդիչ գաղ, ամեն, ամեն բան: Դու կարող ես դուրս կորդել յուրաքանչյուր ճարպակալ շահագործողին, մարդկիշտիչին, ավազակին իր վորչիցն ու պալատից և մերկորեն ցուցազրել ի լուր աշխարհի, զծագըել նրա ազտոտ հոգին քու թուղթ-կտավի գրան, և կամ, ընդհակառակն, տալ մեկ և ավելի լավագույն անձնավորությունների — երենց զրական կողմերով, հանգինությամբ, հոգու գույն ու յերանգներով... Մտքրումդ ծընվող մի զեղեցիկ պատկեր, մի թարմ և ուժեղ համեմատություն պատճառ են դառնում շատ անդամ, վորմի նոր եջ ել ավելացնես գրածներիդ վրան...

Այս ամառանոցը, ուր բուժվելու յեմ գալիս մի քանի տարուց ի վեր, ոժաված ե յեզակի գեղեցկություններով: Ի՞նչ պետք ե լիներ իմ և ինձ նմանների կյանքը՝ յեթե բնությունն սփոփելու չգար մեղ. չե՛ վոր կանանչի այս ծովը խաղաղեցնում և քեզ, մեղմում քո ներքին պայքարի թափը, տագնապներիդ խոլ ու աևական վայրկյանները:

Սիրելիդ իմ, թույլ տուր սակայն քեզ չղբաղեցնել իմ առողջությանս մասին կրկնվող հանկերդովը, վոր յերկարեց — այնպես: Ե՞ս, վերջապես ի՞նչ կարիք կա, ի՞նչո՞ւ զբաղեցնել քեզ իմ սոսկական կյանքովը, իմ ֆիզիքական գոյությամբ: Դու գիտես անշուշտ, վոր մի տարի սրանից առաջ զգալի փոփոխություն նկատվեց իմ առողջության մեջ, ի հարկե վո՞չ զրական: Զգացի, վոր ամեն ինչ անողուտ ե այլիս և յես իշխում եմ դանդաղ ու համբորեն. մի ձեռք առաջնորդում ե ինձ «դեպի տուն»: Արի, ասում ե,

հանգստացիր, խեղճ տղա. յես ել գնում եմ հլու, վորպիկետև պայցքարելու ուժ չունիմ այլիս: Վաղուց բացել եմ յես զինապահնեստիս դռները բողոր, ուազմի գաշտը փոխադրել նորագույն յուրաքանչյուր զենք... նրանք անգո՞ր են այլիս և անպետք: Հասկանում ես, սիրելի և միշտ թանկագին ընկեր իմ: Մտածում եմ և վերջին որերս ասում ինքոս ինձ, «Քնչ պիտի կորցնես այդ հիվանդ ու հոգնած մարմնիցի բացի. նա արդեն բեռ և քեզ համար ծանրածանը, ձանձրույթ և տառապանք մատուկարարող ամբար լեցուն»: Ճիշտ ե, չե՞ս, յեթե յես նույն բանը կրկնեմ և քեզ: Ի՞նչքան շուտ կարողանամ ազատվել այդ բեռից — այնքան լավ, այնքան բարի վերջապես իմ ֆիզիքական գոյությունը մի վերք ե նույնպես մարդկության համար: Նրան պեսոք ե որ առաջ վերացնել մեջտեղից, կրակի բոցերին հանձնել լափող: — Յես ցանկանում եմ, վոր մահիցս հետո իմ դիակն այրվի, անձկորեն յերեվակայում եմ այն որը, յերբ դիակիզարանում կրօնվի այն, ճարճատելով կը վարդին վոսկորներս մոմի պես լուսածանանչ, զրիչ բռնկու ընդունակ ձեռքս յերբեմնի, աչքերս անկուշտ և թափանցող, ապա սիրու, «ուր, որ մը աշխարհը

ի վերջո կմնա աճյունս, մոխիրի գորշավուն և փոքրիկ մի կույտ... Համենայն զեպս այդ չե քիչ թեշատ կուլտուրական մարդու թողած իմ ժառանգությունը, իսկ թե իմ աճյունը միսափորի պահ կտրվի, թե խոնավ հողին — այդ միենույն ե ինձ համար, բոլորովին միենույն:

...Սակայն նա ինձ հետ խոսում ե ելի, հետաքրքրվում մեր կյանքի, որվա նորույթների և իմ

հայրենի քաղաքի առաջադիմության մասին, հետո անվերջ և լավագույն ցանկություններով վերջացնում իր այնքան հետաքրքիր նամակը:

22 հուլիսի,

Այսոր յերկաթուղու կայարանում և առաջին անգամ Հասմիկն ինձ ներկայացրեց իր մորը—տիկին Ռեբեկա Մասեհյանին:

Տիկինն «անհրաժեշտ» գործերով քաղաք եր մեկնել սրանից մի շաբաթ ու կես առաջ մոտավորապես և յերեկ զիշեր միայն հնարավորություն և ունեցել վերադառնալու: Ծանոթությունից անմիջապես հետո տիկին Մասեհյանը նայեց ինձ և ժպտաց սիրավեր, նրա ժպիտը բարենպաստ թվաց ինձ: Անշուշտ Հասմիկը համաձայն մեր կայացրած վորոշմանն այդ մասին հայտնել և մորը առանց ժամանակ կորցնելու: Իսկ զիմացինս ել իր հերթին լափել և ուզում ինձ հայացքներով և աշխատում քննության յենթարկել: Սակայն, այստեղ չե, վոր պիտի շիռթվեմ յես կամ դժվարին կացությունների մատնվեմ: Նրա առջել յես կանգնում եմ անհոգ, վստահ իմ ուժերին միշտ, մի անհոգություն, վոր քեզ մինչեւ անձնապաստանությունն և տանում:

Տիկին Մասեհյանը բարեկազմ ե, զրեթե գեր և միջակից բարձր հասակով: Հակառակ բավականին հասուն իր տարիքին՝ թարմ ե նա, անդորր, նրա հայացքը անամպ և արեսու միջորեյի մի առագաստանավ ե, վոր հանդարտ ու անխոռվ սահում ե կապուտակ ծովի ջրերով...

Այդպես եր իմ առաջին տպավորությունն այդ կողից. հետո, յերբ յես հաճախ պատահեցի և առիթներ ունեցա ավելի մոտիկից ծանոթանալու նրան՝ ավելի քան հաստատվեցի համոզումիս մեջ:
— Վաղուց ե, վոր այստեղ եք յեկել հանդստանալու:

— Գրեթե յերկու շաբաթ, տիկին:
— Գեղեցիկ տեղ և շատ, իսկ յերկաթուղին հեշտացնում ե զործը և բազմաթիվ հարմարություններ ստեղծում...

— Յեթե ձեզ համար գեղեցիկ և այս փոքրիկ քաղաքը, ինձ համար առավել ևս: Սա իմ ծննդավայրը ե, այստեղ են մերոնք և իմ հայրենական տունը:

— Բայց դուք քաղաքում եք ապրում տարվա մյուս յեղանակներին, յեթե չեմ սխալվեմ, և լավ ել ծառայության տեր եք...

— Այս, վատ չե նաև այնտեղի իմ ծառայությունը:

Մեր խոսակցության թելն յերկարեց մինչև մութը, մինչեւ գոշտերը իրիկնային հովի գերկն ընկան և հետին վահանակ մենափոր ծառը նոոյնիսկ աներևույթ կորավ մեր տեսողության սահմաններից:

Բաժանվելիս նրանք «ներողություն» խնդրեցին և հաջորդ որը միայն նախաճաշի հրավիրեցին ինձ իրենց ամառանոց, խոստանալով իրենք ել իրենց հերթին այցելել փոխադարձեար, ծանոթանալ մայրիկիս և մերոնց հետ:

Ավասիկ լուսնի արծաթ հրդեհը ձորակում կանաչ ուր յես և Հասմիկը գնում ենք թևանցուկ:

Յես արդեն Մասեհյան երի համաձայնության ստացել և տիրացել եմ այն ցանկալի եյալին, վորին յերազում եյի, յես նրա հետն եմ շարունակ: Միաւին մենք մտածում ենք նույնիսկ մեր վաղլա մասին և գունագեղ հեռանկարների գծադրությամբ զբաղվում...

Սակայն, ընկերոջս նամակի թողած հետքերը վերքի պես թարմ են դեռ. նրա ապավորությունը կտրառում է հաճախակի մտածումիս յերջանիկ թէլը: Ուրեմն, այդ բազմազգայուն տղան մեկնի պիտի շուտով, պիտի ցամքի ստեղծագործության այդ պայծառ աղբյուրը հանկարծ—անկատար իղձերով, առանց ոիրել կարողանալու...

Լուսնի լույսը յերթալով հորդում ե, վողողում ձորակը վողջ:

Յես և Հասմիկը գնում ենք կանաչ և լուսատարի ուղիներով....

Յոպոտոսի,

Այն, համեստ հարկի տակ, ուր հանգստանալու յեմ յեկած յես, և ուր ծնվել եմ սրանից յերկու ու կես տասնյակ տարիներ առաջ նախանցյալ որը տեղի ունեցավ իմ և Հասմիկի «հարսանեկան հանդեսը»: Յես միայն Զագս գնալու մասին եյի մտածում, մնացյալը (վորին հարսանեկան հանդես անունը տվի) կազմակերպվեց մորս ցանկությամբ: Յես չուղեցի կոտրել

նրա սիրուը, թող նա յել իր հերթին իր տղայի «բախտավորության որը» կազմակերպի այնպես—ինչպես ինքն և ցանկանում:

Մեր մոտիկ ազգականներից բացի, յես հրավիրեցի իմ ընկերներից Ամիրյանին:

Հարսանեկան ընթրիքի համեստ սեղանը մեր անակի պատշգամում բացինք. միակ զեխությունը մորս մորթել տված վոչխարն եր և «Արարատի» այն գեղնավառ գինին, վորից յերբեք կշտանալ չկարողացավ Մաթո հորեղբայրս:

Այդ գիշեր Մաթո հորեղբայրը թէ սեղանապես եր, թէ նվագածու և թէ կարգադրիչ:

— Յես ամեն որքա համար եմ, ասում եր նա, իսկ ես բաժակների և շաբաթի մեջինը—գինին այսինքն — ես որքա համար ե. իմենք ուրեմն ես «աղիզ որում, ինչքան ուժներս կպատի:

— Ո՞ւմ կենացը խմենք, Մաթո ամի, հարցրեց մայրս ուրախ:

Ո՞ւմ... եղ ել հարցնելու բան ե. ախրորս տղի և իրա սոնա կնկա կենացը. ով չխմի—նա իմ ոյլումանն եւ:

Բաժակները դատարկվեցին: Հազիկ «կենացի» առթիվ աղմուկը սկսեց վերջանալ յերբ հորեղբայրս շվին մոտեցրեց ըլթներին.—

- Սիպտակ դոչը մատաղ կանեմ,
- Աղջիկ, յես քո չարը տանեմ,
- Վար ու ցանըս անտեր թողած,
- Կանգնել եմ ձեր դուռն դիմաց.

Նա յերգում եր մերթ, մերթ ել շվի ածում:

— Չի կարելի ձեզ մի բաժակ կակառ առաջարկու Մաթո տմի, ասաց Ամիրյանը, չափելու համար կարծես հորեղբորս տրամադրությունը:

— Ընկեր, կակառն ի՞նչ խմելու բան ե, լուսահոգի յեղբայրս եղ անտեր կակառն խմելով մեռավ:

Ծիծաղ և ծափեր՝ խոսքի տակ մնալ չգիտցող Մաթո հորեղբորս հասցեյին:

— Իսկ ինչպես անել վոր միշտ ել ուրախ մնան նորապսակները՝ և նրանց հետ ել մենք, հարցրեց դարձյալ Ամիրյանը, սպասելով հետաքրքիր պատասխանի նորեն:

— Այ լավ տղա, կուռք կանանչ մնա թող. իմ խեղճ կարծիքով ուրախությունն անպակաս. կմնա սրանց գլխիցն ու մեր յերկրիցը—յեթե ձեր մենծ և մեր ես պուճուր քաղքի բոլոր ջրի կոսնոները գինու հասոսի փոխվեյին. բերաններս աայինք դրանց և կուշտ ու կուռ խմեյինք. հասկացաք.՝՝

Հորեղբորս այս վերջին, բայց և արտակարգ պատասխան-ցանկությունը թնդացրեց մեր փոքրիկ արջանակը նորեն:

Յերբ յես գաղտագողի նայեցի Հասմիկի դեմքին, նկատեցի, վոր նրա այտերը շառագունել եյին, դարձել վարդացոլ իսկ տիկ. Մասինյանը—վորին այդ իրիկուն առանձին և «պատվո տեղ» եր հատկացրել մայրս—մըպտում եր սիրալիք և իրեն խիստ ծանր պահում...

27 ոգոստի,

Արձակուրդիս որերը համրված են արդեն. յերեք որից պետք ե մեկնել:

Յես և Հասմիկը շաղակրատելով արջում ենք դաշտերը, հանդիպում հորեղբորս կենսուրախ, դրացիներին—աշխատանքով բեռնավոր, արևախանձ, բայց յերջանիկ:

Գնալով կանանչը տեղի յե տալիս վոսկուն. դաշտերը ծածկված են խոշոր ցորնաղեղերով. դաշտերում արև կա և բերքի հաճելի բուրմունք, պարտեղներում հասունանում են պտուղները տակավ: Անգործ մարդ չես գտնի այլս, բացի համեցող մի քանի ամառանցավորներից, ինձնից և Հասմիկից: Բոլորն ել մինչև կոկորդնին խրվել են գործի մեջ. խեղճ մայրիկս գլուխ քերելու ժամանակ իսկ չունի, ինչպես ասում են:

Արտերում ցորեն են կալսում արդեն. տեղ-տեղ փլչում են ցորնաղեղերը և բարձրանում աշխատանքի խանդավառ յերգը:

Նայում եմ շուրջա, հետո ինձ վրա և ամոթից կարմրում:

— Հերիք ե պարապ-սարապ թրե գաս դես ու դեն, վեր կաց ու գնա, ովք ե անգործ մեր որերում և այս յեղանակին, ասում եմ ինքինքիս և քննող հայցքով նայում Հասմիկին:

Մեկնումիս մասին հայտնում եմ նաև մորս յերեկոյան:

— Չե, բալա ջան, մի յերկու շաբաթ ել մնացեք. ո՛վ իմանա, թե դնացիք ել յերբ տի գաք:

Հաճախ ել պատրվակներ և գտնում մեր մեկնումը հետաձգելու համար:

— Այ վորդի, ձեռքս թեթևանար միելի, մի յերկու կողոր գաթա ու նազուք թխեյի գոնե և հետներդ դնեյի:

Յեվ կամ թե՝

— Ես անտեր ինձորն ել մի լավ չկարմրեց ու քաղցրացավ, վոր քաղեյի, ուտացնեյի յերկսիդ, յենա մի յերկու քաղալակ ել կոներիցդ կախ անեյի...

1 սեպտեմբերի,

Հեռվից յերեացին կայարանն ու քաղաքը. ճամբորդները գնացքի պատուհաններից առկաին՝ դիտում են քաղաքի շրջապատը. վողջունում և ծանոթ և անծանոթ անձնավորությանց թաշկինակներով, որային համբույրներով, կանչ և յերգերով։ Զգում ես արդեն ողի ծանրությունը, տեսնդագին կյանքը իր հարածուն ընթացքով և անիմքների պես թափալզլոր։ Ինչ վոր անհանդություն խուժում և վրադ, փոթփոթում քեզ ամեն կողմից, հրում այնպիսի թափով, վոր ինքու ել ընկնես այդ ջրապտույտի, յեռուղեռի և ստեղծագործական պայքարի տաք քուրայում։

Կայարանից նստում ենք քաղաք մեկնող կառքերից մեկը և շարժվում առաջ։

Ամառը խանձել ե քաղաքը, իր կրակով թրծել կարծես. աչքի հանգստացնող և հոգուդ անդորր բերող կանանչի կարոտը տանջում ե քեզ։ Հասմիկին չեմ զբաղեցնում այլիս և վոչ ել հարցեր տալիս. թողնում եմ, վոր նրա քնաթաթախ աչքերը յերազեն դեռ, մինչդեռ իմ անհանգիստ և հետաքրքիր հայացքը վորոնումներ և կատարում անընդհատ, նկատի առնում մեն մի նորություն, վոր այս ջերմին և անհրապույր ամառվա ընթացքին ստեղծվել ե, — նոր շենքեր, նոր ջրմուղ,

քանդված տներ, բարձրացող փոշի, ապա այդ ավերակներին հակադիր նոր հիմնադրություններ։

— Վողջուն, թանկագին Արամ Աթանասի, բացականչում եմ։

— Բարի գալուստ, փախստական ընկեր։

Սա իմ ծանոթ ճանտարապետ ընկերս ե, արջապատված տեխնիկներով, բանվորների խմբերով, մեկնող և հասնող սայլերով։

Նայիրյան արել կերել ե նույնալիս նրա գլխարկի գույնը, իսկ դեմքը՝ դարձրել պղնձամափայլ։ Յերեվում ե, վոր ամբողջ ամառը լծված և յեղել աշխատանքի, իսորհել հաշվել և հատակագծեր ե պատրաստել հետո կանգնել։ Իր ծրագիրներն իրականացնելու համար ցուցմունքներ տալու, հետեւելու, շեղումները տեղն ու տեղը խափանելու։ Պատասխանատվության հարցը կատարելով թողնենք դեռ հսկող և ցանկացած բովեյին հետպ հաշվի նստող խորհրդային իրավակարգը։ Վաղը, յերբ բարձրանան նոր շենքի սյուները, ծածկվի տանիքը — նա կանցնի այդ նոր շենքի առջեկցը հպարտ, իր ուժերն ոգտագործող մարդու գիտակցությամբ իի, նրա ներքին ուրախությունը քաղցը տանջանքներ կը բերի նրան. իսկ այդ տանջանքները աշխատունակ մարդուն կմղեն դեպի նոր մտահղացումներ և նոր կառուցողական աշխատանք։ Աշխատանք... Սա յե միակ միրկությունը, որանով ե պայմանագործում մարդու ընկերային կյանքը, սրանում և արտացոլում կյանքի իմաստը։ Մի խոսքով կյանքը դառնում է իմաստուն և անակնկանարով հարուստ։ Ակամայից հիշում ես մարդկության փոքրամասնությունը — ճարպակար ծույլ ու մեղկ, բաղմած վոսկենկար գահլիճներում, մարդիկ, վո-

ըոնց հոգիները ձանձրախտից փառւմ են, վորոնք նորություն են ինտոռում հորանջելով...

Թե ուզում ես ինքդ քո աչքին բարձրանալ (ասում եմ ինքս ինձ) իսկույն ևեթ զործիդ անցիր: Հիշում ես, չե՞ յերազները եղիլլիկ, —անտառ, ջրեր, իսկ այդ անտառի և խշշան ջրերի յեղերքին մի տնակ շինել քեզ և Հասմիկի համար, ապրել այնտեղ անվիշտ, ծաղիկներով և աստղերով շրջապատված, բաղեղը մադրցում ե տնակիդ սյուներն ի վեր, հասնում պատըշգամին, թռչուններն իրենց յերգերով լցնում ննջարանըդ արշալույսին...

— Պարոնյանի փողոց № 57:

Կառապանի ձայնը սթափեցնում է մեզ: Ոգնում եմ Հասմիկին և վերցնում մեր իրերը: Նրա գեմքը փոքր ինչ գունատ թվաց ինձ, նրա համար գուցե, վոր նա յերազի այն ամրոցումը չեր, այլ այստեղ, բաղաքում պարզապես, № 57 տան դեմքիմաց կանգնած այլեւ:

Յ մելքեմբերի,

Իրարանցման և հուզումների մեջ ե այսոր Հասմիկը, վորովհետեւ այս իրիկուն մենք հրավիրված ենք նրանց մոտ «մի բաժակ թեյ»-ի: Սա մեր առաջին և անդրանիկ այցն եւ ձիշտն ասած՝ յես ել եմ հուզված մի քիչ: Իմ նախազգացումը ինձ զանազան կապածների մեջ ե ձգում:

Մասեհյանենց սուս սպասումին դուռը բաց ե անում ժպիտով և վողջունում է մեզ: Նրա ժպիտը մանկան ժպիտի պես անկեղծ ե թվում ինձ և սեպտեմբերյան արշալույսի նման ցոլուն:

միտքս բաժանվում ե այն հարկից, ուր յես մանում եմ և սանդուխի այն փայլուն ու վողորկ աստիճաններից, ուր քայլերս սայթաքելու մոտ սահում են: Ակամայից՝ իմ խանդաղատանքս դեպի այս ոռւսումին լիցնում ե ինձ: Համակրելի ու անչափ լավ են ոռւսները, սբուով պայծառ ու անխարդախ: Նրանց հոգիները լայն են ու լիառատ ինչպես տափաստաններն իրենց հողի, աչքերնին կասկապույտ իրենց յերկնքի պես, իսկ մազերնին —ցորենի արտերի պիս իրենց՝ վուկի: Նրանք առաջինն յեղան մեր մոլորակի վրան, վոր այբեցին հինը, վալիք դարձարձանի խոշոր դուռը բացին, իրենց իսկ ձեռներով բաժանեցին «Մեծ Ռուսիան» և իրենց բերանի մեկ շերտ հացը բաժանել կազողացան մեզ և ուրիշ մեզ նման ժողովուրդների հետ...

Տիկին Մասեհյանի (այլ խոսքով՝ ասած իմ զռքանչի) տաք ու փափուկ ձեռների սղմումը ուշքի յեն բերում ինձ: Լեցուն արտաքինով տիկին Մասեհյանը խաղաղ և կրկին և ջղային շարժումներ գործելուց զուրկ, անշուշտ անցյալի կյանքը իր բոլոր հարմարություններն ընձեռել ե այս կնոջը, նա գտել ե պետք յեղած ժամանակին այն ամենը —ինչ անհրաժեշտ և կյանքի տեսականության համար, սկսած ամենատարրականից մինչև տոռավելագույնը: Չունենալու ահը չի խոսվի նրա հոգու անգորրը, կարիքն իր կեռ սուրը չի խրել նրա սիրուը (մոր կամ ասանտիրունու) արյունելու Յես մայրեր զիտեմ, վորոնց կրած տառապանքը հին սեպագրերի նման նրանց դեմքերին և դրումել կյանքը, նրանց դարձրել գյուրագրին և դյուրազգա, ընդունակ պայքարելու և անձնազոհությանց...

Մասեհյանենց ընդունելության դահլիճը շրեղ ե ըստ ամենայնի և հայելազարդ, Գունավառ և թանկա-

գին գորգեր կան փոված հատակին, կախված պատերից: Դեմքիմացս առկախ՝ ժպտում և նրկմյանի կենդանագիրը:

Հասմրկը վոստոստում է անընդհատ, նրա տրամադրությունը բարձր է հիմա, վորովհետեւ նա զավում է իր հայրենական տանը: Անտարակույս բազմաթիվ հիշատակներ ցանցել են նրան այս հարկի հետ, վերջապես նրան հարազատ է այս տունն իր կահ-կարասիներով, իրերով նույնիսկ:

— Դուք, կոմունիստներդ լավ բնակարաններում ապրել և շքեղ կահավորությունները չեք սիրում կարծեմ, ինչքան գիտեմ կամ լսել եմ:

Տեղ առանց պատասխանի սպասելու՝

— Վո՛չինչ, սրանք բոլորն ել լավ բաներ են, մեզ հետ կլինեք հաճախ, դասիր կառնեք. և կամաց կամաց կուրեք...

Զոքանչիս (այլ խոսքով ասած ափկ. Մասեհյանի) հանդգնությունը վիրավորում է ինձ, աշխատում եմ զսպել ինձ և Հասմիկիս սիրուն դոնե—լոել առաջն անդամ:

Բայց նայում եմ աչքիս անկյունովը և հեգնորեն ժպտում:

Յերբ հերթը դա՛ մենք վո՞չ վոքի խնայել չգիտենք, մենք բոլորս ել անխնա յենք մեր հակառակորդների համդեպ, անխնա կլինենք և ձեր համդեպ, աղնվակայլ զոքանչս...

— Կարծես դուք բան ասիք ինձ, թանկագին Ռուբեն Գրիգորի, այնպես ուշադիր մի բողե ինձ նայեցիք:

— Մոռքովս և մի բոպեյով յես ել սլացա իմ

հայրենի տունը, ուր ամեն ինչ հարազատ եր ինձ կարծես:

— Դուք այստեղ ել նույնքան հարազատ պետք եղաք ձեզ, սրանից վերջ մանավանդ, այս տունը և ձերն եւ Հասմիկին:

— Լավ...

Լոռթյուն անհանգիստ:

Մթնել եր աստիճանաբար. սպասուհին զգուշությամբ ներս մտավ և յելեքտրական լույսի կոճակը սղմեց, իսկ պատուհանների ծանր վարագույրներն իջեցնելուց հետո՝ հրավիրեց մեղ «մի բաժակ թեյի»:

Սեղանատանը նոր հյուրեր նշմարեցի յես: Հասմիկենց աղդականներն եյին սրանք, — ծեքծեքուն տիկիններ, որիսրդներ—կեղծ շարժ ու ձեւերով: Սյուտեղ և առաջին անգամ լինելով՝ յես հանդիպեցի Հասմիկի հորը, այսինքն, խոսքս մանրացրած, իմ աներոջս:

Հասմիկի հայրը միջանասակ եր, կարծես համակրելի և քաղաքավարի ձեւերով, նրա զիմագծության մի քանի գծերը նկատելի յեն Հասմիկի վրան: Նա ավելի «զիվանագետ» եւ զգուշավոր. — տեղիր կան կյանքումդ, յերբ ջորու քայլերովլ պետք ե առաջանաս... ինչպես յերեսում ե, մեր որերում նրա նշանաբանն եայդ պարբերությունը:

Իմ և աներոջս միջև մի շատ սովորական խոսակցություն բացվեց նույնպես, բայց թե ինչով վերջացավ՝ այնքան ել լավ չեմ հիշում:

Ըստ Հասմիկի այդ յերեկոն «հրաշալի» անցավ, «հիանալի խմորեղեններ եր պատրաստել աված մաման, իսկ պապան քաղցր խաղող, գեղձ ու տանձ եր բիկի պապան քաղցր խաղող, գեղձ ու տանձ եր բի-

րել», ինքն ել լավ նվագեց դաշնամուրի վրան «Նաղպարը», «Պարսկական մոտիվները», «Ֆոքստրոտը», ևն. լավ ել պարեցին: Միայն յես «մի քիչ սառն» ելի այդ յերեկո, «անսպասելի կերպով սառն»:

16 սեպտեմբերի,

Քաղաք փոխադրվելուցս ի վեր յես լծվել եմ աշխատանքնս, զդում եմ, վոր գտնվում եմ բնականոն կյանքի ընթացքում: Իմ ժամերը հաշվված են վոչ միայն ծառայությանս սոսկական պարտականություններով, այլ և կուսակցական բազմաթիվ ժողովներով, ստանձնածս զանազան հանձնառություններով: Մի խոսքով յես զնում եմ հօսանիք հետ. սրան կարմիր մակդիրն ենք տալիս, վորովհետեւ անհանգիստ ենա, հարածուն և հեղափոխական: Նրա աճման հետ բարձրանում ե քո տրամադրությունը որե ցորւ Մենք ընկնծվել չգիտենք, նույն իսկ ամենատապահալի բովեներին. մենք իրավունք ել չունենք ընկնծվելու:

Սակայն, մենք ել սովորական մարդիկ ենք մեր առորյա կյանքում և այդ կյանքի վորոշ ժամերին...

Ես անչափ տիսուր եմ այսոր և կարծեմ տիրելու համար լուրջ պատճառ ունիմ: Յերվանդը, իմ բանաստեղծ ընկերը, լուսադեմին վախճանվել եւ: Այնքան ցալում եմ, վոր վերջին անգամ չկարողացա տեսնել նրան: Քույրը (նա հայր չուներ, իսկ մորից մի տարի առաջ միայն զբկվեց) պատմեց, վոր ամենեն ավելի ինձ և սպասել նա, կամեցել ետեսնել ինձ վերջին բովեներին և մի քանի խոսք ասել:

— Հրաժեշտի կցկտուր մի քանի բառեր թոթովելուց հետո՝ Յերվանդը հայացքն անջատեց իմ հայացքից, աչքերը հանդիպակաց լուսամուտին հառեց և սպասումի ջղային և տարորինսկի բովեներ ապրեց. յես հաստատ գիտեմ, վոր նա վերջին վայրկյաններին ձեզ եր սպասում — իր վերջին խոսքն ու ցանկությունը հայտնելու համար գուցե, վորովհետև մրմութիս «Ո» տառը զատորոշվում եր պարու:

Տպագրված և անտիպ անազին գործեր և թողել Յերվանդը: Վերջին ժամանակներում նրա փորձած արձակն ել փայլուն աջողություն ունեցավ: Յերվանդի լեզուն գեղեցիկ եր, ճոխ ու ձկուն. նրա ինքնուրույնությունը շեշտակիորեն նկատելի յեր. նա հետամուտ եր միշտ որիգինալ ձեւրով արտահայտությունների: Գիրախտարար նա կուսակցական չեր, վոչ ել պրոլետրությունը մեծ դեր խաղացին այս ինդում: Բայց նա կանգնած եր առաջադեմ. մտավորականության շարքերում, նոր աշխարհ կառուցողների և նոր մարդու գողեռության մասնակցողների կողքին: Նա քայլում եր մեզ հետ համընթաց, զբա համար ել անտարակույս «մեր լավ ուղեկիցներից մեկն» ելին համարում նրան:

Յեթե ուզեմ մոռանալ Յերվանդին և չկսկծալ նրա մահկան առթիվ՝ չեմ ել կարող: Մանկությունն և ուսումնական տարիները շղթայել են մեզ իրարու, մի տեսակ որպանական կապ և սեղծվել իմ և նրա միջև: Թեև մեր բնավորության գծերի մեջ շեշտված տարբերություններ կային, սակայն նրան հաջողվում եր շատ անգամ իր «աղեցցության տակը» ձգել ինձ — իր արվեստի հմայքով և այդ մարզերում ձեռք բերած բազ-

մակողմանի զարգացումով, ծանոթություններով և պոյշետ մարդու տաղանդով:

...Ահա յես և նա: Յելեքտրական լամպին դրել եկանաչ լուսամփոփը, մենյակը դարձրել կիսալույս և թերասավերներով անըջածուփ. Նկատելի յեն սիկարի մանուշակ ծուխն ու կրակի աչքերը կիսամութի ֆոնի վրան: Մի նոր գործ ե կարդում այդ որը նա ինձ. Նրա դեմքի թեթեակի շառագունելը մատնում ե հուզումը, հետո—քրտինքի կաթիլներ նրա լայն ճակատին պատուղպտուղ: Նրա ձայնը թափ ե և կես-խզված, դրա համար ել կարդալիս թափ ջութակի ձայնն ե հիշեցնում:—Ընթերցումը վերջանում ե:

— Մեծ քունչով գրված գործ ե սիրելիս, ասում եմ:

— Միթե... Ռուբեն. յես քեզ հմայեցի պարզապես, մեծ բան չկար այստեղ. մի քիչ ճաշակ և համառաշխատանք...

— Յեվ տաղանդ. ըստ յերեսույթին այդ «հեշտ» գործը կապված ե մեծ շնորհքի կամ տաղանդի հետ: Հետո իջնում ե լուսթյան թավիշը...

Այս, թանկագին Յերվանդս, «մի քիչ ճաշակ և համառ աշխատանք»: Դու վոչ միայն այդ յերկուսն ունեյիր, այլև յերբորդը, ամենեն անհրաժեշտը,—տաղանդ: Բո ճաշակը «մի քիչ» չեր սիրելիս, մեծ եր նա և ակներե նույնպես:

Յես քեզ չեմ մոռանա: Իմ հոգու կտավին դուքոցեղեն գծեր ունես դրոշմած, համելի և արվեստի ժամերի հետքեր խորունկ. քո հիշատակն իբր վոսկեհաւակ ծաղիկ կապրի իմ մեջս—ինչքան ապրեմ այս մոլորակի վրան:

Ժողովներն ու բավականին պատասխանատու պաշտոնս ստիպում են ինձ շատ անգամ ուշ դիշերով վերադառնալու տուն: Իսկ Հասմիկը սկսել ե խոռլ տըրտունչներ բարձրացնել այդ պահերին մանավանդ: Փոխանակ քնիլու սպասում ե ինձ յերկար, հետո չդիմանալով և տարված քնի ալիքներից՝ ննջում ե փոքրիկ բազմոցին ընկած: Նա պահանջում ե կրծատել «ավելորդ» աշխատանքներս, այն «կրկնվող ժողովները», վորոնք իմ հաճախակի ուշացումներիս պատճառ են գառնում: Յերբոր առաջարկում եմ նման անհարկի պահանջներ չանել—հուզում ե, յերբեմն ել լալիս: Այդ նշանակում ե, վոր մի մոտալուս և գեղեցիկ որ, նրա հուզամումը զարգանալով կարող ե համել կիզակետին: Սրան իրեկ փաստ կարող ե ծառայել և այն «ցույցը» վոր սարքեց խանդից, վորովհետև յերեկ իրեկունը նա լուսամուտից նկատել ե, թե ինչպես յես Ամիրյանի քրոջ — յերիտասարդ կուսակցունի Սաթիկի հետ ժողովիցն եմ վերադառնում, յես առաջարկել եմ նրան ուղեկցել, իմ վերաբերմունքը շատ «տաք» ե յեղել:

— Ի՞նչ ընկերուէի. չե՞ վոր նոր ամուսնացած մարդ ես դու. թող ամուրիներն անեն նման բաները, թող...

Նրան համոզելու փորձերս զուր անցան գրեթե: Նա չի կարող յերեակայել կուսակցական մարդու կյանքը, պարտավորություններն ու զրությունը:

— Փոխանակ հետաքրքիր տեղեր, — թատրոն, կինո և կոնցերտներ տանելու ինձ միշտ—սեացնում ես որերս, Քեզ հետ ապրելիս յես այսպիսի ամուսնական

կյանք չելի պատկերացնում յերբեք, հասկանում ես, յերբեք...:

Սա արդեն «սկիզբն և յերկանց»:

16 սեպտեմբերի,

Հաշտություն և կայացել արդեն մեր միջև։ Սա մի հաշտություն ե, վորը, յեթե թույլ տրվի ինձ, կարելի յի համեմատել մեր և մեղ հակառակորդ պետությունների միջև կայսցրած ժամանակավոր հաշտությունների հետ։ Յյուրաքանչյուրը մեղանից ուզում և կառած մնալ իր համոզմանը, իր սկզբունքին և յերբեք չգիշել։ Եեթե կուսակցական մարդու իմ կամքը ինձ անսասան և պահում ժայռի նման, ապա Հասմիկին ոգության են գալիս նրա քաղքենի ծնողները։ Նրանք պարզապես համոզում, դըմում են նրան։ Նրանք ուզում են, վոր յես զիշեմ, յես հարմարվեմ նրանց աստիճանաբար։ Գուցե այդ բանը հեշտ և թվում նրանց։—Յես հիշեցի մեր առաջին այցը և զոքանչիս ծիծաղաշարժ խոսքերը։ Վորպես թե յես հետզհետե պիտի յենթարկվեմ նրանց, դառնամ «տան տղա» և «խսկական ու հավատարիմ փեսա»...։

Պետք ե անապատճառ սպասուի վարձել յես խոհարարուհի չեմ, վոչ ել լվացք անող,—կրկնում ե Հասմիկը։

Կամ՞

— Միթե այսպիսի խեղճ ու կրակ ձևերով պիտի ապրել, տեսան հորանցու տունը, լիք, շքեղ, ձեռները յեղ ու մեղքի մեջ թաթախ։
Հետո՝

— Յես ուզում եմ, վոր ձեռներս սպիտակ մնան միշտ, այնքան քնքույշ, վոր համբուրելիս ծաղկեփոշի գգաս շուրթերիդ նստած։

Նա իր մեղմության մեծ մասը կորցրել և աղեն։ մեր վիճաբանությունների ընթացքին պարզուեն այլ կողմ և հանդիսանում, աշխատում և նույն իսկ «ուղիղ ճամքի» մեջ դնել ինձ...։

27 սեպտեմբերի,

Իրիկնամութ ե։

Յելիքրական լամպիկները լուսավորում են շուրջը, փողոցը, ուր աղմուկը գնալով մեծանում է։ Հեռավոր բուլվարի կարմիր աստղը հրեցեն փարոսի պես և վառվում։

Մեր հեշտայենը մեղմ քլթքլթում և սեղանին, և մինչ Հասմիկն զբաղված ե թեյապատրաստությամբ, յես անդրադանում եմ մեր այնքան մոտավոր անցյալին և արդի զբությանը։ Միթե այս այն աղջկներ, վորին յես այսպես հեշտությամբ սիրեցի, վոր գեղեցիկ եր իրոք, զեղեցիկ և նաև հիմա։ Անհրաժեշտ և սակայն վերլուծել «գեղեցիկ» տերմինը, վորովհետեւ մեր որերին գիմագծային սոսկական գեղեցկությունը անբավար և շատ։ Նա անընդունակ և կազմակերպելու նոր կյանքը։ Փամատ։—ավասիկ։ Իմ ընտրած կյանքի ընկերուհին կյանքի այլ պայմաններում, ուղում եմ ասել հին որերում, ընտանեկան հարկի «Ճըագը» կարող եր դառնալ ընտանեկան տարբեր գրություն ստեղծել և դաստիքորել մարդ ու կնոջ փոխհարբերությունները։ Իսկ անցյալը գնաց անդառնալի-

որեն, նա դարձավ պատմության սեփականությունն անժխտելի: Ուրիշ հարցում ինքզինքիս, — Հնարավոր ե արդյոք տեսականորեն սիրել մի կնոջ, վորը գեղեցիկ չե Փիզիքապես, բայց նոր և իր գաղափարներով և համոզմունքներով: Դժվարանում եմ վճռական պատասխանը տալու...»

Մի բաժակ թեյ ե դնում առջևս Հասմիկը, ինքն ել նստում կողքիս. Նրա տրամադրությունը լավ ե. լիձը խաղաղ ե և կապտալի: Նստում ե կողքիս և նայում ինձ ժպտուն աչքերով և փոքրիկ ապտակներ հասցնում այտերիս փաղաքշորեն:

— Անպիտանս, ի՞նչ կը լիներ, յեթե ածիլված տուն գայիր այսոր. միթե ել հետաքրքիր չեմ քեզ համար:

— Հետաքրքիր ես, ասում եմ:

— Հապա ուր են նախկին արտահայտություններդ. առաջ յուղի պես հալչում եյիր քովս, մանկան պես դառնում բարի:

— Իսկ զ՞ու...

— Յես ել կատու եյի քեզ համար: Միտդ և. մի անդամ ինձ «փափլիկ փիսիկ» անվանեցիր:

— Յես կատուներին չեմ սիրում. նրանք շատ շուտ են չարանում ու ճանկում մարդու:

— Քեզ նման գամփոներն ել տանջում են ինձ, յեթե մի քիչ ել չաղանաս—իսկ և իսկ հոտի մեծ գամփը կը դառնաս. այնպես չե...

Յեվ սկսեց ծիծաղել յերկար, հնչուն ծիծաղով:

Թակ, թակ:

— Մտեք ինդրեմ:

Տեր և տիկին Մասեհյանները յերկացին դռան

շեմքին: Հասմիկի զվարթ ծիծաղը նրանց ել վարակեց իսկույն: Ուրախ բաներ սկսեցին պատմել նրանք: Հասմիկը շաղակը բատում և ծիծաղում է անվերջ. ծիծաղում և այնչափ, վոր թեյ լեցնելիս յերկու բաժակ ձաքեցրեց անզգուշությամբ:

Բավականին ուշ մեկնեցին մեր հյուրերը:

30 սեպտեմբերի,

Բանալին զնգում ե փականքի մեջ ուրախ և ճամբում մեզ. սանդուխի աստիճաններն ել տրամադրված են թվում քեզ. Հասմիկը կանգնում ե հանկարծ և համբուրում ինձ:

— Իու լավն ես Ռուբեն, յես ի գնւր եմ ջղայնացնում քեզ յերեխն:

Հասմիկի արտասանած բառերը գորովանքի և զըղձման յուղով ոծուն են: Նրա գորովանքը վարակում է ինձ: Կարծես վոչինչ, վնչինչ չի պատահել իմ և նրա միջև, վնչ մի փոթորիկ, մի թյուրիմացություն, վնչ իսկ անհշան մի բիծ մեր առաջին սիրո ձյունածաղկի թերթիկներին... Յերբ դիմացինդ—ընկեր, կինք կամ քույլ հարազատություն—խոստովանում ե իր սխալը անվերապահորեն՝ զու դառնում ես ներող և անհիշաչար: Հենց այդ բոպիցից սկսյալ նրա մարդկային մեծահոգությունը ընկճում ե քեզ:

... Համաշափ և մեղմ աղմուկով դառնում ե մեքենան և կինոլինտը մեր դիմացի կտավին հանձնում նկարը մաս-մաս:

Կահավորված և տաքուկ սենյակում յերեք ուսանողներ ճաշի յեն նստել խմում են ընկերներից նրա

կենացը, վոր դեպի հարավ պետք ե մեկնի: Լայնատարած տափաստանները ձանձրացը ել են նրան, նրան ձանձրացը ել ե նաև հյուսիսի խստաշունչ ձմեռը: Սպիտակավուն ձյունի վրայով սահում ե նրա բալիսիրը, անցնում ե կայանե կայան, վերջապես կանգ առնում կովկասյան մի մեծ զյուղում, ուր բնությունը տարբեր ե բոլորովին: Զրեր՝ վրգրահորդ, գահավեժ ընկնող ջրեր ձորերում, լուսընկա գիշերների ոճագալար գետ, նուրբ յեղեղնուտներ, անտառներ, ապա հսկայական լեռներ, վորոնք տեսողությունդ մի ըստեցում խափանում են—թոփչքներ տալու նորեն մտքիդ, նոր կարոտ ու վորոնումների տագնապն ստեղծում ներսդ...

Ուսանողը, վոր յենթասպայի աստիճան ունի և անցնում ե զինվորական ծառայության՝ ընկերներ և գտնում այստեղ ևս, ընկնում ե մի նոր աշխարհ—նորանոր արկածներով հարուստ: Նրա յերիտասարդ սիրտըն այստեղ նույնպես զրավվում ե, վորովհետև այդ լեռնային բնության չափ զյութիչ ե իր տանտիրոջ աղջիկը,—ինչ փույլթ թե նշանած ունի նա արդեն: Մի գեղեցիկ որ ուսանող-սպան մեկնում ե իր զինվորական կազմի հետ, թողնում յերազ-իրականությունը, տանտիրոջ աղջիկը, տոնական որերը, վորոսորդական կյանքը, գիշերային ընթրիք ու գինարբուքները... Հոսող կյանքը նրա հիշողության կտավին ե միայն հանձնում բոլորը: Այս ամենը վերցված ե մի հին, բայց հանձարեկ հեղինակի վեպից:

Հասմիկը նույզես ծանոթ ե այդ վեպին. դբա համար ել գուցե հանդիսատ նայել չի կարող նկարին. յերեում ե, վոր հրճվանքը թեավորում ե նրան...

— Ա՞յս, լեռները, սերը, անչափ ուրախություններով լի սիրտդ, ասում ե դառնալով ինձ և իր խոշոր ու սև խաղողի հատիկ աչքերով նայում վրաս:

Նրա յերազամոլ աչքերը ծարավի յեն այն բոլորին, վորոնք Ծնչվեցին հանդիպակաց կտավի վրայից այնպես արագ:

Թատրոնը մթնում ե գարձյալ: Համաչափ և մեղմ աղմուկով դառնում ե մեքենան կրկին և կրնո-լենտը ուրիշ տեսակի նկարներ ցուցադրում:—Վարար բազմություն ե հոսում. թաղելու յեն տանում տմարդորեն սպանված մեր կարմիր դիվանագետ ընկերներից կետախն: Հեղափոխության կարմիր մայրաքաղաքի հրապարակներից մեկում բարձրանում ե նրա բրոնզյա արձանը ապա հերթով անցնում ե զեկավար ընկերների շաբթը: Ավասիկ կուսակցական հետաքրքիր և բազմամարդ համագումարներից մին, պատասխանատու ընկերներից մեկը զեկուցում ե, մյուսները լսում են ուշադիր, վոմանք ինչ վոր նշանակում բլոկ-նոթներում. մի բարձրադիր՝ պատվանդանի կանգուն—նայում ե կենինի կիսադրին և ունկնդրում կարծես լարված ուշադրությամբ: Յերբ զեկուցումը վերջանում ե, պատգամավոր-ունկնդրները ծափահարում են տաղանդավոր զեկուցողին և վառքի յելնում ընդուած:—

Ցելիք, ում կյանքը անիծել ե,
Ով ձորտ ե, մերկ ե և ստրուկ.

Սա յե մեր վերջին կռիվը,

Թվում ե ինձ, վոր յիս ել եմ այստեղ, յես ել
մասնակցում եմ ընկերներիս և յերգում նրանց՝ հետ
«Խստերնացիոնալը», իմ սիրտն ուռչում ե հոկայական
առաջաստի նման և գնում խառնվելու նրանց յերգին
մըրկաշունչ ու անդնդագալար:

Խեղճ հասմիկը վորքան հեռացավ ինձնից նա
հանկարծ. մի կետ ե նա հիմա իմ հըսկառ յերազի
եկրանի վրա, փոքրիկ և տննշմար դրեթե:

14 ԲԱԿՏԵՄԲԵՐԻ,

Ներս մտնելիս՝ Հասմիկի ընթերցանության գիրք
փակելն ու շառագունելը մեկ յեղավ:

— Նայիր, յես քեզ հետ եյի դարձյալ:
— Ինձ հետ...
— Յես մենակ վերադարձա...
— Ինչպես չես ուզում հասկանալ քո Հասմիկին:
— Պատահնեմ ե, սիրելիս:

— Այս առավոտ, քո մեկնելուց վերջ, աշնան ա-
նույշ արկի տակ յես փակեցի աշքերս և վերադարձա
այն անտառը, ուր յես Զապելի և Անահիտի հետ և
առաջին անգամ պատահեցի քեզ: Դու նստել եյիր մի
մեծ ծառի տակ, փակել աշքերդ և յերազում: Անտա-
ռը գեղեցիկ եր և յերազներով լեցուն... Միտք և
հետո, զու խայտառակվեցիր այդ որը... վաչինչ, յես
չեմ ուզում վոր կնոջդ ներկայության և յերկորդ ան-
գամ կարմրես դու:

— Կարմրով դռւ եյիր ավելի շուտ:
— Մոռանանք գեղեցիկ որվան տիսուր կետը:
— Դեմ չեմ:

Մեր սեղանին քըրիզանթեմների մի խոշոր փունջ
կա դրված, իսկ հատակին, Հասմիկի շուրջը, խոզկա-
ղիններ կան թափթփված: Մի բոպե ուշագիր նայե-
լուց հետո, նկատեցի վոր այդ խոզկաղիններից մի քա-
նիսովը մի բառ և շարել նա նույնիսկ.— Ռուբեն:

— Այ քեզ հետաքրքիր տարորինակությունն և
կամ փոքրիկ մանկական չարաճճիություններ:

— Թող այդպես լինի... բայց... մի դժբաղդու-
թյունն և պատահել ինձ:

— Չեմ նկատում:
— Վորովհետև յես չեմ ուզում իմ դժբաղդու-
թյանն իսկույն մասնակից դարձնել և քեզ: Իսկ դու
խոստանում ես ոգնել ինձ:

— Յեթե ուժերս չդավաճանեն...
— Գլխավորն այստեղ քո ցանկությունն ե, զուր

տեղ խոսքը կտուրը մի ձգի:

— Իսկ հնարավորությունները...
— Իսկ յեթե ունենաս այդ «հնարավորություն-

ները»:

— Յեթե ունենամ՝ ուրախությամբ:
— Լսիր ուրեմն...

Հասմիկը հայտնում ե ինձ, թե հատուկ և պաշ-
տոնական գրությամբ հայտնված ե իր ծնողներին,
վոր նրանց տունը յենթակա յե գրավման, պետք ե
բատարկել այն շուտով, վորովհետև նրա ճակատին
մի ցուցանակ պետք ե կախվի հետեւյալ մակագրու-
թյամբ.— Գյուղացու Տուն:

— Իսկ վեր բաժինն ե հատկացվում նրանց բնա-
կությանը համար:

— Մի ուրիշ թաղամասում և միայն յերկուսեն-
յակից բաղկացած հարկաբաժին:

— Վնաս չունի:

— Իմ ծնողները չեն կարող, չեն ուղում բա-
ժանվել իրենց սեփական տանից, նրանց համար մա-
հու չափ ծանր ե այդ, հասկանում ես, Ռուբեն:

— Հասկանում եմ, պարզ ե:

— Ուրեմն...

— Ուրեմն կը մտածենք:

— Վհչ, գու խոսք տուր ինձ, վորպես զի յես ել
նրանց իմ խոսքը տամ: Այդ գու կանես վոչ միայն
մերոնց համար, այլև ինձ ու քեզ համար, ինձ ու
քեզ...

— «Ինձ ու քեզ, ինձ ու քեզ»... կրկնում եմ մի
քանի անգամ և նայում քրիզանթեմներին զեղնավառ,
վորոնք աչքերիս են նայում շեշտակի, Հասմիկի ա-
րցունքուա աչքերն ինչպես և պատասխան հայցում:

Պատասխանելու համար ժամանակ եմ ստանում
և մի կերպ փակում հարցը առժամապես: Ասում եմ
առժամապես, վորովհետեւ յես պարտավոր եմ պատաս-
խանելու նրան: Յեվ լինչ, միթե կարելի յեր տարա-
կուսել այսեղ: Խորհրդացին իշխանությունը անհրա-
ժեշտ ե գտել և գրա համար ել հրամանով կարգադրել:
Եյստեղ պետք ե իջնե գյուղից հողի հետ կապված աշ-
խատավորությունը — ապաստան գտնելու, զերծ մնա-
լու իր շուրջը վիտացող մեծ ու փոքր ավաղակներից...
Զե վոր յես ել գյուղացի յեմ վերջի վերջո, այս իշ-
խանության մոտիկից գործակից և կոմունիստ: Իսկ
յեթե յես դիմեմ ուր վոր հարկն ե, այսինքն իմ մո-
տիկ ընկերներիցս մի քանիսին... Նու, յենթադրենք

կարգադրությունը փոխվեց. չե վոր ուրիշ և նման
տները ճարվում են, կարելի նույն իսկ «նոր առար-
կություններով» փոփոխման յենթարկել վորոշումը:
Հասմիկը թերե կառնե այն ատեն, — «դու լավն ես յե-
ղել, Ռուբեն, շատ լավ» կը լսեմ նրանից հաճախ: Նա
կը դառնա ավելի զվարթ և աշխուժ: Նրա ոճաճապուկ
թերեն անկեղծությամբ կը փաթաթվեն վզովս և շըր-
թունքները սարսուռնարով ջերմին՝ կը սպասեն իմ
շուրթերիս, և ոչ զիտե, փոխան ոժիտի և թափված
նոր աշխատանքի — յես նոր և թանկարժեք իրեր կը
ստանամ: Արծաթյա շրջանակով հայելու մեջ Հասմիկի
գեմքն ավելի պայծառ կարտացորա քան չերովդիհաղա-
յի գստեր գեմքը և թափշապատ թիկնաթուններում
ընկղմած՝ իրիկունները «մի բաժակ թեյի» կնստենք
մենք անդորրավետ մթնոլորտում... Միթե, հավատում
ես ինքդ քեզ, միթե այս վերջին միտքդ ավելի ծանր,
չե քան գորշավուն տապանաքարը, քան մահը... Վհչ
յես մարդ եմ, բայց վոչ ուրիշ աշխարհում ապրու,
վոչ մեր զեմ կրակ բաց անողներին զենք մատակարտ-
րող... Գիտեմ, Հասմիկի հոգին գնալով կը պղտորի,
նրա ջրերում ի զուր իմ նկարը փնտոեմ պիտի... սա-
կայն իմ ճակատը կը մնա բարձր և անաղարտ, յես
առանց կարմրելու հաշվի կը նստեմ ինձ հետ, ընկեր-
ներիս, կուսակցությանս հետ, յես ի հարկին հաշվի կը
նստեմ բաց ճակատով և մեր թշնամիների հետ...

16 հոկտեմբերի,

— Դժբաղդաբար հնարավորություններ չկան
փոխելու համար կարգադրությունը, հայտնում եմ
Հասմիկին ճաշից հետո:

— Վերջնականապէս...

— Վերջնականապէս:

Հասմիկը շրջում և զլուխը և սկսում լալ:

— Հիմա ավելի քան իրավունք ունի տսելու հայրիկա, թե բոլցեկիները քանդեցին մագաղինս, խարելով տարան աղջկանս, հիմա յել տունս են խլում, տունըս... ճիշտ ե, ճիշդ...

Մի պահ փորձում ե դսպել իրեն, յերեսը դարձընում:

— Արդյոք ճիշդ են կարգադրությունները, պէտք ե իրականան...

— Կարծում եմ:

— Իսկ յեթե ճիշտ են, ինչպես տակիցը դուրս պիտի գանք գոնե մենք, գոնե յես և գու...

— Սատանան տանի, ինչո՞ւ յես և դու շղթայված Մասհյանների հետ, ծիծաղելի յեռ ուղղակի, ծիծաղելի, սիրելիս...

— Ծիծաղելին գնւ յես, գնւ, դու հիմար ես նույնիսկ և քո սեփական շահերը վոտնահարող:

— Լավ...

Յես ժպտում եմ հեգնորեն, մինչ Հասմիկը շարունակում ե իր ընդհատված հեծկլտուքը, ավելի խորունկ, ավելի սրտակեզ: Իմ մտքի զուգորդությունը նրան հեշտությամբ համեմատում ե «Փարզանա» բալլագայի արքայազմտեր վերջին բողեների հետ.—

... Հույսը հատավ... ու լաց յեղավ,

Ենքան արավ լաց ու կոծ,

Վոր լիճ կտրեց արտասուքը.

Ծ նոյեմբերի,

Աննախընթաց որեր են, առավելապես մեղ, կուսակցականներիս համար: Մենք պատրաստվում ենք տոնելու Հոկտեմբերյան հեղափոխության տասնամյակը:

Մա մի փառավոր տասնամյակ ե, մի յեղակի յերեսույթ մեղ համար—մեր մոլորակի վրան: Մենք պատահական հազթանակ չեր վոր տարանք սրանից տասը տարի առաջ—ի գին բազմաթիվ և յերիտասարդ գոհերի, յերբ ըրջեցինք պատմության անիվը: Խափանելով ընդմիշտ հինը՝ մենք նոր ուղիներ բացինք գալիք որերի համար: Մեր կամքից անկախ տեղի ունեցած ավերածություններից հետո—մենք անցանք նորոգման և ստեղծագործական աշխատանքի: Յեվ ովեր ընդունակ իսկապես հսկայական նախաձեռնությանց և մեր հողամասում արտադրականության բարձրացման աշխատանքին, յեթե վոչ դարեր շարունակ իր աշխարհն ուսերով կառուցող բանվորը և գաշտերը բեղմնավորող հողի մարդը—ջլարազուկ ու յերկաթ:

Մենք ցանկություն ունենք հաշվի նստելու ինչպես մեղ՝ նույնպես և «սահմանից անդին» նստած մեր ընկերների և բարեկամների հետ:

Այս իրեկուն յես և ընկերուհի Սալիկը պետք ե մեկնենք Արագավան—մեղ հետ տանելով թեղիսներ, նկարներ, նշանաբաններ, դիագրամներ և տոնական հատուկ-գրոշակներ: Մենք պարտավոր ենք մեր ուժերի սահմաններում ծանոթացնել նրանց մեր յերկրի և Միծ Միության վերելքի հետ:

Նախ այդիների միջով, հետո բաց դաշտի նորաշեն խճուղովն ե սլանում մեր ոթոն, Վաղուց ինձ ծառթ մեր ճանապարհը այս անգամ տարբեր ե թվում կարծես Բնությունն ու իր տարրերն իսկ ինչ վոր հանդիսավոր յերևեյթի յեն սպասում կարծես: Արեն իշնում ե մի առանձին վեհությամբ, հրաժեշտ տալիս խաղողի հեռատարած այդիներին, աշնահերկ արտերին, քլուրներին կապտամշուշ:

Մեր աջ կողմը բազմել ե ձյունապատ Արարատը, գլուխը ծրարած արդեն ամպի ծվեններով: Ընկնում ե Արարատյան դաշտի հովը և ընդհատում տիրող լոռ-թյունը:

Ես և Սաթիկը ծրագրում ենք դարձյալ, վորոշումներ կայացնում մեր անելիքների մասին և նայում երար հրձվեալ:

Իմ կողքին նստել ե վոչ միայն մի կին, վոր ընդունակ և տրամադրելու, հուզելու, այլև մի անձնավորություն, մի ընկերուհի, վոր գիտե արդեն մեր կյանքը, մեր պայմանները: Սա կազմակերպված մի անձնավորություն ե արդեն, վոսկի և մոխրագույն որերը հետդ բաժանել գիտցող և վաղվա կատարելատիպ բաղաքացուհու սաղմնավորումը:

Սաթիկի աչքերը սկ են և խոշոր, մորթը թխավուն: Սաթիկը միջահասակ ե և մի փոքր լեցուն: Յեթե չի խոսում—ժպտում ե լուռ:

Յերբ ավարտում ենք մեր կատարելիք աշխատանքի ծրագիրը և նրա մանրամասները, Սաթիկը դառնում ե դեպի ինձ.—

— Հա, մոռացել եյի հարցնելու քո անհատական

կյանքի մասին, ինչպես են նոր դրած տանդ հիմքերը:

— Բավականին հիմնավոր:

— Իսկ ինչպես ե տիկին Հասմիկի վորպիսությունը:

(Նրա ձայնի մեջ մի փոքր հեղնանք կա):

Լավ, ձեռքդ ե համբուրում, պատասխանում եմ կտակով:

— Դժբաղդաբար անձնապես և մոտիկից չգիտեմ նրան: Արտաքնապես լավիկն ե անպիտանը: Բավականին ընտիր ճաշակի տեր ե յեղել ուղեկիցս:

Մի փոքր կծու եյին դարձյալ Սաթիկի խոսքերը թեև, բայց զգում ես, վոր գեմդ հավասարազոր ընկեր ե կանգնած, տարբեր բոլորովին փափկաթաթիկներից:

Ընկերունուս ըստ յերեւյթին սովորական հարցու կատակները մտածել են տալիս ինձ նորեն և որը ախս կրակին յուղ ածում կրկին:

Լոռության մի տարտամ գիծ ե յերկարում, իսկ շոփերը քշում ե ոթոն անդադար, արագ և փոշով մըշշուզում մեր անցած խճուղին: Իմ մտքերը թոշում են նույնպես և թաղվում մեքենայի բարձրացրած փոշուպես մշուշ խորհրդածությունների մեջ: Յես իմ անհատական կյանքում սիալ գործեցի և վոտքս գրի սիալ ճամբի վրա, ինչքան ել յերկրորդական լինի այդ ճամբան մեր ընդհանուր կյանքում—այնուամենայնիվ նա կոչված ե վորոշ դեր խաղալու իմ կյանքում: Պետք ե այնպիս աներ վոր նա գեղեցիկ լինելուց բացի—դառնա ընկերուհի, կարողանա նստել կողքիդ և անցնել անապարհը, հետո մեկ ուրիշը, չորրորդը, հինգե-

բորդը... Պետք ե: Բայց դիմացդ պատի պես ե, առաջար...

Սաթիկը խփում ե ձեռքիս և սթափեցնում ինձ: Հասել ենք արդին: Ուզիղ մեր դիմաց Արազավանն ե փոփել: Արազավանը վառել է իր յելեքտրական լույսերը և դարձել շենցող:

Մի քանի ընկերներ մեզ դիմավորելու յեն յեկել նույն խոկ: Նորիկ գիշերվան մեջ հնչում ե արծաթի պես Սաթիկի ձայնը դարձյալ և ցրում մտածումը վերջին ամպիկը:

27 նոյեմբերի,

Ավելի քան սպառնական ամպեր են կուտակվել նորեն մեր ընտանելիան մթնոլորտում: Մի քանի որ ե, վոր Հասմիկը հետո չի խօսում, կամ խիստ անհրաժեշտ հարցերիս կարծ ու լակոնիկ պատասխաններ տալիս միայն:

— Չունինք...

— Վաչ:

— Պետք չե:

— Զգիտեմ...

Ուրվակերպ և թախծագեմ դառնում ե հիմա շուրջը, հետզհետե զառնալով ոտարուհի:

Առավոտներն ինձ հետ մեկնում ե նա տանից, ճաշից հետո վերաբառնում տրտում և գլխահակ: Զգիտեմ թե ինչեր են լեցնում զլուխը, սակայն, հայտնի ե, վոր յես նոր դիպված կամ անակնկալի առջև եմ գտնվում:

Առանձնապես այսոր մի էետի յե նայում նա շա-

րունակ, նրա աչքիրը լի յեն դառն արտահայտություններով: Զի խոսում՝ բայց ասում ե (մտովի):

— Մենք տարբեր հայացքի տեր մարդիկ ենինք, ինչու չմտածեցիր այդ մասին առաջուց, հիմա ի՞նչ անեմ յես, կարելի՞ յե արդյոք այսօքան վաղ կանգնել կոտրած տաշտակի առջե...

Յես՝

— Ճիշտ ե, յես խղճում եմ քեզ, պետք ե վողբերդությունից ազատվելու միջոցը գտնել...

Աչքերս զառնում են շուրջս, յեթե հանկարծ ընկերներից մին զա—ի՞նչ պիտի ասի, մեր տրամադրաթյան պես ամեն ինչ տակն ու վրա,—հատակին և նկարների շրջանակին փոշի յե նստած, բաժակներում թեյի մնացորդներ կամ, տոններին հագած իսկ այժմս աղտոտ պլուզը նայում ե ինձ նույնպես և պատասխանի սպասում...

Սիպտակ դոչը մատաղ կանեմ,

Աղջիկ յես քո չարը տանեմ...

Ուր մնացին յերդդ ու բաժակաճառդ, Մաթոնորեղբայր, իսկ յերազներդ, իսկ դմ մայրիկ:

Լոռությունն ապրում ե դարձյալ:

Թող նա ասի վճռական խոսքը (մտածում եմ), յես զիշելու հնարավորություն չունեմ:

Հանկարծ Հասմիկն սկսեց հեծկլտալ—կիզանուտ ու հորդ արցունքով: Երա արցունքը գալիս ե քայլքայելով և սրտի խորքից:

Իմ զրությունս դարձավ ավելի և ավելի անտառելի. չզիտեմ, յես գանվել եմ յերբեկցե նման անել գրության մեջ կյանքումս: Ինչքան հիշում եմ՝ վո՞չ:

Յավի մի սուր դանակ շողացրին սրտիս կարծես,
մեկը ջարդելով գետին փռեց յեղենիները կանաչա-
գեղ. թշնամի մի ձեռք մի արձան փշրեց նրբա-
կերտ...

Ուզում ես հանկարծակի և մի արտակարգ դեպք
պատահի, թեկուզ յերկրաշարժի ցնցումներ, վորպես
զի հնարավոր լինի ազատվելու այս կույր գըությու-
նից: Ո՛, յես վատն եմ, հանցավոր, յես ինձ ցույց
չտվի նրան ամբողջապես, իսկ հիմա, այսքան շուտ,
նրա գեղեցկությունը ձանձրույթ է բերում ինձ նույն-
խոկ շատ հաճախ, նրա պահանջները ծիծաղ ու զայր-
ույթ են հարուցանում իմ մեջս... Յես պարտավոր եմ
գոնե «ներողություն» խնդրելու չասմիկից. չգիտեմ
ինչով կը պատասխանի դրան նա, բայց այդ ե միակ
միջոցը, ուրիշ միջոց յես չգիտեմ, իսկ յեթե կա յեւ
հիմա գժվար ե հիշել այն....

Հետոզհետե քայքայվում ե աշնան իրիկունը,
մթնում աննկատելիորեն. մութը ծածկում ե մեզ ան-
խոս, անաղմուկ:

Դուրսը՝ սակայն աղմուկ ե կյանքը, քաղաքը
շարժվում տենդագին: Հողը դղրդացնելով սլանում են
ոթոները, լսելի յեն կառքերի թողած քառարոփիը:

Փոլոցից մատնիչ լույսեր են ընկել մեր սեն-
յակը:

— Պետք ե քնել առաջարկում եմ չասմիկին
գորովով, վաղը առավոտյան մենք յերկար կը խոսենք
իրար հետ, գուցե նորեն կպարզվի թյուրիմացու-
թյունը:

— Վո՞չ, պատասխանում ե նա հեծկլտակեն, գեռ
լույսը չբացված պետք ե մաքրել ամեն հաշիվ... մայ-

րիկս համաձայն ե... նա ինքն առաջարկեց նույն-
իսկ... քիչ վերջ նա կդա...»

— Մեզ մոտ, խոսելու գուցե:

— Վո՞չ, նա ինձ կը սպասե փողոցում, դրան
առջեւ:

Զղային լոռություն:

Մոտավորապես կես ժամ ե սահում դանդաղ
յերբ մի կառք հանկարծ կանգ ե առնում մեր գրան
մոտիկ. ձիյերն անհանգիստ են, փնչում են ձիյերը և
վուներով դոփում գետինը: Լսում եմ կանացի և բա-
վականին ծանոթ մի ձայն.—

— Հասմի՞կ...

Սենյակի մթության մեջ մեկը վեր ե կենում,
շոշափելով մեկնում ձեռները և յերկու սև կույտեր
վերցնում հանդերձարանից:

Յես տաճում եմ միայն իմ շորերը, ուրիշ վհ-
չինչ, մի յերջանիկ ձեռք կգա վաղն ի հարկե՝ վասե-
լու քո տան ճրագը. կարծում եմ այդ ձեռքն այնքան
ել անձանոթ չե քեզ, վոչ ել շատ հեռու. նրա անունը
ս,ս,ս...

— Սըսս... շշնջում եմ:

Այլես վոչ վոք չկա ինձ մոտ, իմ սրտից զատ
վո՛չ մի սիրտ չի բաբախում մթության մեջ:

Սակայն դուրսը շարժում կա, մեծ աղմուկ, շարժ-
վում ե նաև քիչ առաջ հասնող կառքը և մեկնում ան-
վերադարձ:

Ց Ա Ն Կ

1. Վաղուց մեռած մարդը
2. Մանուս Քեռին
3. Մի զոհ յեկս
4. Կենդանի և կրակի մարդկանց հետ
5. Վերադարձ



ՀՀ Ազգային գրադարան



NL0366023

57534

გ. 75 ბ.



ვ ი ს ე მ ა ნ

ცოცხალ და
ცეცხლოვან
ადამიანებთან

სახელმწიფო გამოცემა-მუზეუმი

1931